

ՇԱՐԱԿԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

12-14-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

12-րդ դարում շարականագրությունն ապրում է նոր, աննախընթաց վերելք:

Դարի առաջին շարականագիրն է խոշոր մատենագիր և եկեղեցական, կրթական գործիչ **Հովհաննես Սարկավագը** (վախճ. 1129, այլ տվյալներով՝ 1139): Եղել է հմուտ տոմարագետ, աստվածաբան և փիլիսոփա, ուստի հայտնի է նաև **Խմաստասեր** մականունով: Թողել է մատենագրական հարուստ ժառանգություն, որտեղ առկա են նաև չափածո գործեր՝ բան, տաղ, աղոթք, շարական: Հետևաբար կրել է նաև **Պոետիկոս** պատվանունը:

Հովհաննես Սարկավագի գործունեությունը սկսվել է 11-րդ դարի վերջին քառորդից, Հաղպատում: Սակայն նա իր հիմնական գործերը, այդ թվում նաև շարականները, ստեղծել է 12-րդ դարի սկզբներից, երբ կաթողիկոսական տեղապահ (ապա՝ կաթողիկոս) Բարսեղ Անեցու կարգադրությամբ նշանակվել է Անիի վարդապետարանի ուսուցչապետ: Այնուհետև դարձյալ անցել է Հաղպատի վանք: Հավանաբար Բարսեղ Անեցու հանձնարարությամբ է գրել իր շարականները:

Ծարակնոցի հեղինակային ցանկերի վկայությամբ, «ԶՂեւոնդեանց Անճառելի Բանդ Աստուածն, Վարդանանց Անթառամ սիրոյ ծնունդքն Յոհանու Քահանայի է ասացեալ»: «Եւ զՂեւոնդեանց Մանկունքն դձ՝ Սարկաւագ վարդապետն, որ ի Հաղբատ»: «Յոհաննէս վարդապետն՝ Սարկաւագ կոչեցեալ՝ զՂեւոնդեանց դձ Մանկունքն, զՊայծառացան այսօրն»¹:

¹ **Հ. Անապան**, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ LXVI–LXVIII: Տե՛ս նաև **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 113:

Ուսումնասիրությունը Ն. Թահմիզյանին քերել է այն ենթադրության, որ Հովհաննես Սարկավազն է հեղինակել նաև «Անսկիզբն Բանն Աստուած» սկսվածքով շարականը: Ըստ ուսումնասիրողի, Սարկավազը երիտասարդ հասակում հորինել է Ղևոնդյանց տոնին նվիրված «Պայծառացան այսօր» երգը, իսկ յետոյ, ստեղծագործական առումով շատ աւելի հասուն շրջանում «Անսկիզբն Բանն Աստուած» եւ «Անճառելի Բանդ Աստուած» շարականները... Հետագայում, եւ յատկապէս՝ Ղևոնդեանց նուիրուած այն շարականների կանոնացումից յետոյ, որոնք յօրինել է Ներսէս Ծնորհալին, Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէրի երկու համատիպ ստեղծագործութիւններից մէկը՝ «Անսկիզբն Բանդ Աստուած»ը տեղադրուել է Հոփփսիմեանց կանոնի մէջ»²:

Ըստ այսմ, Հովհաննէս Սարկավազը ձգտել է ստեղծել Ղևոնդյանց նահատակներին ձոնված առանձին կանոն, որտեղ ընդգրկել է իր հեղինակած երեք երգերը («Պայծառացան այսօր», «Անճառելի Բանդ Աստուած» և «Անսկիզբն Բանն Աստուած»): Ըստ երևույթին, նա դրանց կցել է Մարտիրոսաց կանոնից քաղված այլ երգեր՝ ստորաբաժանելով իր և այլոց գրած երգերը ըստ կանոնի: Հետագայում Ներսէս Ծնորհալին վերակազմել է այդ կանոնը...

Ծարակնոցային առաջին ցանկի (Սարգիս երեցի կազմած) համաձայն Հովհաննէս Սարկավազն է հեղինակել նաև Վարդանանց տոնին նվիրված «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականը, որը, որպէս Օրհնութիւն, նախապէս ընդգրկված է եղել Ծարակնոցում, ապա դուրս մնալով՝ դարձել պարականոն³:

² Ն. Թահմիզեան, Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, «Բազմավէպ», 1979, էջ 350: Այս կապակցութեամբ տե՛ս նաև Գ. Աւետիքեան, Բացատրութիւն Ծարականաց, Վեներտիկ, 1814, էջ 435, 447-448: Ավետիքյանի վկայությամբ, որպէս շարականի հեղինակ «ասեն զՅովհանն Մանդակունի կաթողիկոսն» (Գ. Աւետիքեան, Նշվ. աշխ., էջ 447): Դա, անշուշտ, չի համապատասխանում իրականությանը: Նշենք նաև, որ պահպանվել է Ղևոնդյանց նվիրված մի պարականոն շարական, որի հեղինակն անհայտ է (տե՛ս Ս. Ամատունի, Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 170):

³ Բնագիրն ամբողջությամբ հրատարակել է Ս. Ամատունին (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 165-170):

11-րդ դարում Պետրոս Գետադարձը հորինել է Վարդանանց ձոնված «Արիացեալք առ հակառակսն» Մանկունքը: Հովհաննես Սարկավազը ձգտելով կազմել ինչպես Ղևոնդյանց, այնպես էլ Վարդանանց նվիրված առանձին կանոն, գրել է «Անթառամ սիրոյ ծնունդք» Օրհնութիւնը՝ կցելով Գետադարձի հորինած Մանկունքին և այս անգամ էլ Մարտիրոսաց կարգից քաղել այլ երգեր: Սարկավազի կազմած այդ կանոնը «Նորահրաշ պսակաւոր» նշանավոր շարականով համալրել է Ներսես Շնորհալիին⁴:

Այսպիսով, ուրեմն, մեզ հայտնի են Հովհաննես Սարկավազի հորինած չորս երգեր, որոնցից երեքը նվիրված են Ղևոնդյանց, մեկը՝ Վարդանանց մահատակներին: Այսինքն՝ բոլորն էլ արժարժում են «հայկական թեման»:

Եթե, ինչպես ենթադրում ենք, Վարդանանց մահատակների տոնը Հայ եկեղեցում վավերացվել է Պետրոս Գետադարձի օրոք, ապա Ղևոնդյանց մահատակների տոնը պաշտոնապես հաստատվել է ավելի ուշ՝ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի օրոք (1105–1113):

Ղևոնդյանք, ինչպես գրում է Ծ. Արք. Գալուստյանը, «Վարդանանց կրօնական ազատութեան շարժումին առաջնորդները, հրահրիչները եւ ոգին են... Թէեւ Տօնացոյցի մէջ «Քահանայ» տիտղոսով յիշուած են 9 հոգիներէ բաղկացեալ մահատակներու այս խումբը, սակայն անոնց մէջ ներկայացուցիչներ կան մեր Եկեղեցիի բոլոր կարգերէն՝ Կաթողիկոս, Եպիսկոպոս, Քահանայ ու Սարկաւազ: Ընդարձակ է ասոնց վկայաբանութիւնը, որ մանրամասնօրէն տրուած է ժամանակակից Եղիշէ եւ Ղազար պատմիչներէ»⁵:

Նշված վկայաբանության հիման վրա է Հովհաննես Սարկավազը հորինել Ղևոնդյանց մահատակներին նվիրված երեք շարականները: Ի դեպ, հեղինակել է նաև նրանց ձոնված մի ներբողական ճառ...

⁴ Այս կապակցությամբ տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XVդդ., Երևան, 1985, էջ 235, «Բազմավէպ», 1979, էջ 351:

⁵ Ծ. Արք. Գալուստեան, Հայագգի Սուրբեր, Երևան, 1997, էջ 83:

Հովհաննես Սարկավագն ապրել ու գործել է այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանն արդեն կորցրել էր իր անկախությունը և ենթարկվել հատկապես սելջուկ թուրքերի վայրագություններին: Դրանց հետևանքով աննախադեպ տարագնացության ալիք էր ծավալվել: Ծանր հարվածներից հետո ուշքի եկած ժողովրդի մեջ ծնվում է իր ցրված զավակներին «ի մի հավաքելու և փրկելու ձգտումը՝ որոշ գաղափարախոսությամբ, որի առաջին արտահայտիչը գրականության մեջ՝ է մեծիմաստ Սարկավագ Վարդապետը»⁶: Այդ ձգտումը որոշակիորեն արտահայտված է «Պայծառացան այսօր» շարականում, որտեղ սաված է.

*Հեղմամբ արեան սրբոց Քոց հօտապետաց
զեկեղեցոյ Քո ցրրունեալ մանկունըս ժողովեա՛
յուրախութիւն.
ըզվարատեալըս՝ տըրտմութեամբ եւ արտասուաց
յորդահոս բըղխմամբ,
փըրկութեան մերոյ պարգևաց Բաշխո՛ղ:*

Ինչպես գրում է Մ. Աբեղյանը. «Ցրված հայ ժողովրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք և շատ վաղ, Լաստիվերտցու կրտսեր ժամանակակցի, Սարկավագ Վարդապետի ձեռով մտնում մեր ժամերգության մեջ: Այդտեղ դեռ չկա քաղաքական անկախության խնդիր, այլ միայն տառապանքից ազատվելու և Հայաստանում մնալու մի իղձ է այդ»⁷:

Կիրակոս Գանձակեցու բնութագրմամբ, «Պայծառացան այսօր» շարականը հորինված է «քաղցր եղանակաւ եւ յարմար բանի»⁸: Սակայն այլ կարծիքի են մոր ուսումնասիրողները: Ն. Թահմիզյանը թեև այդ երգը համարել է «գողտրիկ շարական», սակայն գտել է, որ երաժշտական արվեստի առումով «երեւելի մտյշ չէ»⁹: Իսկ ըստ Մ. Աբեղյանի, այս երգը «շատ փոքր, իր ձևով շատ հասարակ ու հետևակ բան է»: Անվանի

⁶ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Գ, Երևան, 1970, էջ 71:

⁷ Նույն տեղում:

⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 113:

⁹ «Բազմավէպ», 1979, էջ 346:

գրականագետը, սակայն, բարձր է գնահատել շարականի բովանդակությունը, որը «մեծ ու վսեմ է և անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է մանավանդ, երբ իր «քաղցր եղանակով» երգվում էր եկեղեցում տառապլալ հավատացյալներից, առանձնապես նրանցից, որ դեռ երկար դարեր զգում էին իրենց վարատված լինելը և աչքերը կարոտով դարձնում էին իրենց բնիկ երկիրը՝ Հայաստան»¹⁰:

Ղևոնդյանց նվիրված հաջորդ երկու շարականները կազմված են տասական տներից, որոնց տողերի սկզբնատառերով հողվում է հայկական այբուբենը: Դրանք «երկվորյակ» շարականներ են, որոնք ունեն «նոյն իմաստները, հոետորական նոյն ոգին, նոյն լեզուն ու ոճը, նոյն տաղաչափությունը»¹¹: Հետևաբար կարող են դիտարկվել իբրև մեկ ամբողջություն, որին, ի դեպ, բնորոշ է նաև «վիպա-քնարական լայնաշունչ եղանակը»:

«Անճառելի Բանդ Աստուած» շարականում, որը, Գ. Ավետիքյանի բնորոշմամբ, հորինված է «Գեղեցիկ եւ վսեմական բանիւք եւ իմաստիւք»¹², հեղինակը քաջարի մահատակների ընդհանրական գովերգից զատ, անդրադառնում է նաև առանձին անձանց: Բնականաբար, նախ առանձնացնում է մահատակների խմբի պարագլխին՝ Ղևոնդ երեց վանանդեցուն, որին նվիրված տունը մի ոգեշունչ ներբող է.

*Լուսաորիչն ամենեցուն՝ Ղևոնդի է սուրբ վարդապետըն,
խոհական մեծ խորհրդով խրատեալ՝ լըցոյց
զաշակերտեալսըն,
ծաւալեալ գլոյս գիտութեան յոգիս արանց կատարելոց,
կամատր յօժարութեամբ կատարեցին սիրով Փրըկչին:*

Ծարականագիրն առանձնացրել է նաև Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսին և Սահակ Ռշտունի եպիսկոպոսին.

*Յառաջացեալ յամենեցունց Յովսեփ՝ ընտրեալ
աշակերտացն,*

¹⁰ Մ. Աբեղյան, Նշվ. հրատ., էջ 71–72:

¹¹ «Բագմավէպ», 1979, էջ 348:

¹² Գ. Աւետիքեան, Նշվ. աշխ., էջ 447:

*Աորահրաշ սիրով լըցեալ եւ Աահատակ բարի ցուցաւ,
շինեցաւ տաճար փառաց սրբորթեան անմահ Բանին:*

*Ռահ լուսոյ մեզ ծանուցեալ՝ զանգիտութեան խաւարն ելոյծ
Սահակ սուրբ հօտապետ՝ սրովբէական բարեացն հաղորդ,
վերբերիչ վարուց բարեաց, վարիչ չարին պաշտօնէից,
տարփացեալ անճառ Լուսոյն՝ վերապլացաւ ի կեանս անմահ:*

Ծարականում ներքողական քնարական շունչը երբեմն միա-
խառնվում է դյուցազներգական-վիպական պաթոսին.

*Հրով Հոգոյն զհնու վառեալք՝ ըզհալածիչսըն վանեցին,
ձօնեցան զենմամբ սրբոյ ի բանատր ողջակիզումն,
ղամբարամբ լուսոյ կենաց զխաւար մեղաց փարատեցին,
ճոխաբար հետեւեցան լուսաշաւիղ ընդ պողոտայն:*

Գիտարկվող շարականներում գտնում ենք բաղաձայնույթ-
ներով և առձայնույթներով օժտված մի շարք կոփածո տողեր,
իճչպես նաև որոշ ինքնաստիպ պատկերներ.

Չարաչար չարչարանօք զչարին մորհակարն կապտեցին...

Ծաղիկըքն միթեղէնք յանմիթ Ծաղիկըն յօղեցան:

Օրհներգուի ապրած ժամանակաշրջանից շուրջ վեց դար
առաջ հանուն հայրենիքի զոհված Ղևոնդյանց վկաների գով-
երգն այս անգամ էլ ինքնանպատակ չէ: Հովհաննես Սարկա-
վազն իր այս երկու շարականներն էլ ավարտում է համանման
ձևով՝ ժամանակակիցներին կոչ անելով հետևել ու աշակերտել
Աահատակ-ուսուցիչներին (րաբունիներին) և պսակակից լինել
նրանց («Հիւսեցին թելք հոգւոց ընդ հիւսից պրսակելոցն»):

Հայրենիքի ազատության Աախանձախնդիր բանաստեղծը
չբավարարվելով այսքանով՝ մի ծավալուն դյուցազներգական
շարական է ձոնել Վարդանանց բոլոր Աահատակներին: Այս
շարականը ևս ակրոստիքոս է: Բաղկացած է 36 քառատող
տներից, որոնց սկզբնատառերով հոդվում է հայկական այբու-
բենը: Առաջին տասը տներում օրհներգուն դիմում է Վարդա-
նանց վկաներին, հաջորդ տասնութ տներում՝ Քրիստոսին, իսկ

վերջին ութ տներում խոսում է նահատակության հետևանքների մասին:

Հայ ժողովրդի ազատության և նրա դավանանքի ինքնության համար նահատակված հերոսներին Հովհաննես Իմաստասերը համարել է Քրիստոսի սիրելիներ, «անթառամ Սիրոյ ծնունդք», ազգային Եկեղեցու հաստատության «իմաստուն ճարտարապետք», հույսի շավիղներում ուղղորդողներ, որոնք հոգու արագաքայլ ոտքերով փութացին ստանալու անկողոպտելի գանձը (երկնային Արքայությունը), որի ստացմամբ երջանկացան: Դիմելով այդ երանելի քաջազուն վկաներին՝ օրհներգուն ասել է.

*Թըշնամեաց անօրինաց ընդդիմացայք ի պատերազմ՝
ըզգաղտնիս որոգայթիցն նահանջումն առեալ ի վերջ
եւ ընթանալ պատրաստաբար առ Զօրագլուխն առաքինեաց՝
ի ձեռանէ՛ Նորա առնուլ զգեղեցիկ թագադրութիւնն:*

Այնուհետև բանաստեղծը դիմում է արդար Արեգակ Քրիստոսին, և նրա խոսքը նոր շունչ է հաղորդում հայ ավանդական լուսերգությանն ու ազգային թեմատիկային: Խավարվածների լուսատու Տերը հայ քաջազունների միջոցով փարատում է աշխարհակուլ, համատարած մեղքերի գիշերը: Հաջորդ տան մեջ կարդում ենք.

*Խաղաղութեան անճառելոյ առատաբար Պարգեատոր՝
եւ հաշտարար Հոգւոյդ Բաշխի՛ջ՝ ի խոովութեան մերոյ
քակտումն,
ըզնոյն եւ այժմ շնորհեցեր եկեղեցաց Հայաստանեայց՝
ի վերըստին նորոգութիւն կործանելոց յանօրինաց:*

Ծարականի վերջում արտահայտված է այն հիմնական գաղափարը, թե Վարդանանց վկաներն ինքնակամ ստանձնեցին Տիրոջ չարչարանքներն ու վախճանը.

*Յանկացան մահու Նորա անբերելի յօժարութեամբ
եւ մատնեցին գանձինս իրեանց ի նեղութիւնս անտանելիս,
ունակութեամբ սիրոյ Նորա բոցակիզեալք եւ տապացեալք՝
ի զովացումըն դիմեցին, որպէս յաղբիւր քաղցրահոսան:*

Հովհաննես Սարկավազի այդ օրհներգը թեև պարականոն է դարձել, սակայն գրչագրից գրչագիր անցնելով՝ վերապրել է և նախապատրաստել Ներսես Շնորհալու «Նորահրաշ պսակաւոր» հանրահայտ շարականը¹³:

Հիրավի, Սարկավազի «գմայլելի այս երգը... մի մեծ ու հոյակերտ կառույց է», որ ունի ճոխ լեզու, սահուն ոճ: Այդ հատկանիշներով այն հար և մման է բանաստեղծի ամենանշանավոր չափածո գործին՝ «Բան իմաստութեան» քերթվածից¹⁴: Այստեղ ասենք, որ Ղևոնդյանց նվիրված երկու ակրոստիքոս երգերը և Վարդանանց ձոնված օրհներգը գրված են ոչ թե հայրենի տաղաչափությամբ, ինչպես կարծել է Ն. Թահմիզյանը, այլ «Բան իմաստութեան» քերթվածի չափով, որը թեև մոտ է հայրենի տաղաչափությանը, սակայն նույնական չէ: Այդ քերթվածի ոտանավորը Մ. Աբեղյանը համարել է մեծավայելույչ, «որ և իր երկայն տողերով ու տողամիջի հատվածներով ունի լուրջ բնավորություն և շատ պատշաճում է բովանդակությանը»¹⁵:

Հովհաննես Սարկավազի երաժշտա-բանաստեղծական ստեղծագործությանը ամփոփվում է Անիի շարականագիրների դպրոցի գործունեությունը:

Անիի շարականագիրների դպրոցի ավանդույթները շարունակել ու զարգացրել են Կիլիկիայի երաժիշտ-բանաստեղծները: Նրանցից առաջինը **Գրիգոր Պահլավունին** է: Նա 1113 թվականին ընտրվել է Հայոց կաթողիկոս և գահակալել մինչև 1166 թվականը: Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի հետևությամբ հունարենից թարգմանել է և հանձնարարել է թարգմանել մի շարք վկայաբանություններ, ուստիև կոչվել է **Փոքր Վկայասեր**:

Գրիգոր Փոքր Վկայասեր Պահլավունին, որպես Հայոց հայրապետ, կարգավորել է որոշ եկեղեցական տոներ, մասնա-

¹³ Այս կապակցությամբ տե՛ս **Ս. Ամատունի**, Նշվ. աշխ., էջ 165:

¹⁴ Տե՛ս «Բագմավէպ», 1979, էջ 351–353:

¹⁵ **Մ. Աբեղյան**, Նշվ. հրատ., էջ 76: Տե՛ս նաև **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Ե, Երևան, 1971, էջ 177:

վորապես Աստվածածնի Ավետման և Երկրորդ Ծաղկազարդի տոները, որոնց նվիրված օրհներգերի նոր կանոններ է ստեղծել: Դրանք հայտնի են «Խորհուրդն անճառ» և «Մեծահրաշ այս խորհուրդ» անվանումներով, որոնք այդ կանոնների Օրհնութիւնների սկսվածքներն են: Ծարակնոցի հեղինակների ցանկերից երկուսում վկայված է. «Իսկ զԽորհուրդն անճառ, եւ զՄեծահրաշն՝ Գրիգոր Վկայասէրն»: «Գրիգոր Վկայասէր՝ եղբայր Ծնորհալույն զԽորհուրդն անճառն, եւ զՄեծահրաշն»¹⁶:

Ստեղծելով Ավետման նոր կանոնը՝ Պահլավունին, ինչպես նշել ենք, կարգում ընդգրկված երգերը տեղաբաշխել է Մովսես Խորենացու հեղինակած Հարության Մեծացուցեաների շարքում, իսկ Երկրորդ Ծաղկազարդի նոր կանոնն ստեղծելուց հետո հին կարգի երգերը կցել է Սահակ Պարթևի հեղինակած Ծաղկազարդի կարգին: Այսինքն՝ նա հստակորեն իմացել է, թե ովքեր են եղել այդ հին կարգերի հեղինակները:

Նշենք նաև, որ Պահլավունու այս երկու կանոնները ստեղծված են նույնական կառուցվածքով. երկուական Օրհնութիւն, մեկական Հարցն, Մեծացուցե, Ողորմեա և Տէր յերկնից:

Գրիգոր Պահլավունու հեղինակած Ավետման կանոնը, նախկին կարգի համեմատ, առավել որոշակի է արծարծում օրվա խորհուրդը: Գ. Ավետիքյանը «գեղեցկալարմար շարական» է համարել կանոնի Օրհնութիւնը, որ «վայելչապէս սկսանի»¹⁷.

*Խորհուրդն անճառ՝ ծածկեալն յազգաց եւ յաիտեանց,
յայտնեցաւ իջմամբ հրեշտակապետին այսօր առ Կոյսըն
Մարիամ,
զոր առ Տէր ունիմք բարեխօս վասն անճանց մերոց:*

¹⁶ **Հ. Անապան**, Նշվ. աշխ., էջ LXVI–LXVIII: Ավետման նոր կանոնը սխալմամբ վերագրվել է Գրիգոր Բ Վկայասեր Պահլավունի կաթողիկոսին (տե՛ս **Գ. Աւետիքեան**, Նշվ. աշխ., էջ 26): Սարգիս Երեցն իր կազմած ցանկում, շփոթելով Գրիգոր Գ Պահլավունուն և Գրիգոր Սկևտացուն, գրել է. «ՉԱւետեաց հինն եւ զԾաղկազարդին հինն Գրիգոր վարդապետն Սկևտեցին է ասացեալ» (**Հ. Անապան** Նշվ. աշխ., էջ LXVI): Այստեղ կա նաև մեկ այլ վրիպում. Ավետման հին կարգը ստեղծել է Մովսես Խորենացին, իսկ Ծաղկազարդի հին կարգը՝ Սահակ Պարթևը:

¹⁷ **Գ. Աւետիքեան**, Նշվ. աշխ., էջ 26, 28:

Այդ անճառ խորհուրդը Քրիստոսի մարդեղացումն է Սուրբ Կույսի որովայնում, որ մաքրագարոված է Սուրբ Հոգով: Ուստիև, պաշտելի ու խնկարկելի է Աստվածածինը, որին շարականագիրը օրհներգում է՝ հետևելով Խորենացուց սկիզբ առնող մարիամերգությանը: Նա, բնականաբար, օգտագործում է Մարիամին տրված ավանդական կայուն մակդիրներն ու փոխաբերությունները՝ երբեմն կատարելով նաև որոշ ինքնաբուխ գեղումներ: Այսպես, «Աղբիւր կընքեալ ջրոյն կենդանութեան» հայտնի փոխաբերություննից հետո ասել է. «զոր ծարաւելոյ բնութեանս ետուր ի յարբումն»: Ուստիև, Սուրբ Կույսին օրհներգում համարել է նաև «Ուրախութիւն տրտմեցելոյ բնութեանս»:

Մարիամերգության մի գեղեցիկ նմուշ է կանոնի Տէր յերկնիցը, որի եռատող տներն սկսվում են «Ուրախ լեր» բառերով և Մարիամին տրված մակդիրներով: Ուրախությամբ ողողված այս երգում ևս ներհյուսված են ավանդական և ինքնահնար պատկերները: Ահա նախավերջին տունը.

*Ուրախ լեր, Ա՛մպ թեթև, Գե՛ղմն իմանալի,
որ ի բանական երկիր հեղեր զանձրև կենաց՝
արդիւնս ընդ գործոյ հաւատոյ պըտղաբերեալ:*

Պահլավունին Սուրբ Կույսին գովերգել է նաև Երկրորդ Ծաղկազարդի կանոնի Մեծացուցելում: Այստեղ էլ դիմելով «Ամպ թեթև» Տիրամորը՝ բանաստեղծն ասել է.

*Ա՛մպ թեթև՝ լուսաւոր, անընդունակ խնաւութեան,
որ ըզգօղըն կենաց ի ցամաքեալ բնութիւնս ցօղեր,
օրհնութեամբ ըզՔեզ բարեբանեալ՝ մեծացուցանմեր:*

Երկրորդ Ծաղկազարդի նոր կանոնը ևս, նախկինի համեմատ, հստակորեն ներկայացնում է տոնի «մեծահրաշ» խորհուրդը, որ նշանավորում է հրեշտակների ուղեկցությամբ Հիսուսի մուտքը Վերին Երուսաղեմ: Երկրորդ Ծաղկազարդի տոնակատարությունը առնչվում է նաև ազգային ավանդությանը, որ արձանագրված է Տոնապատճառ մատյանում: Ըստ այդ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը երբ փակված է եղել Խոր Վիրապում, ամեն օր մի հրեշտակ այցելել է նրան՝ ի պաշտպա-

նություն: Քրիստոսի Համբարձման օրը հրեշտակը նրան չի այցելել: Հաջորդ օրը Լուսավորչի այն հարցին, թե ինչո՞ւ նախորդ օրը հրեշտակն իրեն չի այցելել, վերջինս պատասխանել է, թե ինքը լինելով չորրորդ դասից՝ ցանկացել է Քրիստոսի Համբարձման տոնի ուրախությանը մասնակցել¹⁸:

Այս ավանդությունն է բանաստեղծորեն վերաշարադրված Գրիգոր Պահլավունու խնդրո առարկա կանոնի Օրհնութեան մեջ: Այստեղ շարականագիրը նորովի արծարծել է «ազգային թեման» և այն գաղափարը, թե բանական արարածների փրկության այս խորհուրդը տոնախմբելով՝ նշում են միաժամանակ հրեշտակները և մարդիկ.

*Եւ քանզի մեծ այս խորհուրդ ի փրկութիւն բանաւորաց՝
հրեշտակաց եւ մարդկան առ հասարակ կատարեալ
երկոցունց սեռից ի միասին յարմարութիւն:*

Գրիգոր Պահլավունին ոչ միայն կատարել և կազմակերպել է մի շարք վկայաբանությունների թարգմանություններ, այլև կարգադրել է, որ սրբերի նախատոնակներին եկեղեցիներում կարդացվեն նրանց վարք-վկայաբանությունները: Ըստ երևույթին, նա է մեր Եկեղեցու տոնացույցում հաստատել համաքրիստոնեական խոշորագույն սրբերից մեկի՝ Գևորգ Զորավարի հիշատակի տոնը և գրել նրան նվիրված շարականների կանոն («Գովեալ զնդից զինուորաց»): Այդ կանոնը, որ հետագայում անվավեր է դարձել, Ս. Ամատունու վկայությամբ, ընդգրկված է եղել 1159 թվականին գրչագրված մի Ծարակնոցում, որտեղից մուտք է գործել 1768 թվականին Կ.Պոլսում հրատարակված Ծարակնոցի մեջ (էջ 666–671)¹⁹: Կանոնի առաջին չորս շարականների սկզբնատառերով հոդվում է՝ **Գրիգորիսի առ Գեորգէոս վկայ:** Ելնելով այս բանակապից՝ Ղ. Ալիշանն այդ կանոնն ընծայել է Գրիգոր Անավարզեցուն²⁰: Մինչդեռ, ինչպես գրում է Ս. Ամատունին, «շարականների գրությունը շատ հեռու է Անա-

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 354:

¹⁹ Տե՛ս նաև Ս. Ամատունի. Նշվ. աշխ., էջ 46:

²⁰ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 242:

ւարճեցու կոշտ ու պլոշտ լեզուից»²¹: Ամենակարևորը, սակայն, այն է, որ 1159 թվականին գրչագրված Ծարակնոցում չէր կարող ընդգրկված լինել 13-14-րդ դարերում ապրած Անավարճեցու ստեղծագործությունը²²: Ուստի միանգամայն արդարացի է Ամատունու այն համոզմունքը, թե Սուրբ Գևորգի կանոնի հեղինակն է «Շնորհալու երեց եղբայր Գրիգոր Փոքր Վկայասէր»²³:

Ասեմք նաև, որ Գրիգոր Պահլավունու հեղինակած սուրբ Գևորգի կանոնին Ներսես Շնորհալին հավելել է մի նոր Օրհնութիւն («Քաջամարտիկ սուրբ նահատակ») և մի Մանկունք («Ո՛ր՛վ Սուրբ Գէորգ»)։ ընդ որում հավելված Օրհնութիւնը ևս ընդգրկված է եղել 1159 թվականի Ծարակնոցում, որտեղից և Պահլավունու հեղինակած կանոնի հետ մուտք է գործել 1768 թվականի Կ.Պոլսի Ծարակնոցի մեջ (էջ 116-118) և ապա մտել Զայնագրեալ Ծարակնոց: Իսկ Շնորհալու հավելած Մանկունքը, խնդրո առարկա կանոնի անվավեր դառնալուց հետո, ընդգրկվել է Մարտիրոսաց կանոնում:

Սուրբ Գևորգը քրիստոնյա ծնողների զավակ էր և իր քաջության շնորհիվ զորապետ էր կարգվել հռոմեական բանակում: Դիոկղետիանոս կայսեր օրոք նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի²⁴: Գրիգոր Պահլավունին առաջինն է հայ իրականության մեջ օրհներգել այս մեծագոր սրբին՝ առաջնային նպատակ ունենալով հավատացյալ լսարանին առավել հաճելիորեն ու հասկանալի ներկայացնել նրա վկայաբանությունը: Ըստ այդմ, շարականագիրը որոշ մանրամասներով և հանգավոր տողերով շարադրել է վկայի անասելի չարչարանքները, այլև քաջագործություններն ու հրաշագործությունները:

Մակաբերելով Գևորգ անունից, որ հունարեն նշանակում է

²¹ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 46:

²² Գ. Մադոյանն, այսուհանդերձ, Սուրբ Գևորգի կանոնը Գրիգոր Անավարճեցու ստեղծագործությունն է համարել և այն ընդգրկող Գրչագիր Ծարակնոցի 1159 թվականը, առանց որևէ հիմքի, չի արժանացրել «լիակատար վստահութեան» (Գ. Մադոյան, Գրիգոր Անավարճեցիի շարականագիր, Երևան, 2001, էջ 65, տե՛ս նաև էջ 60-64):

²³ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 46:

²⁴ Տե՛ս Ծ. Արք. Գալուստեան, Համաքրիստոնեական Սուրբեր, էջ 155-156:

Երկրագործ, Պահլավունի՜ն կիրառել է համապատասխան փոխաբերություններ և ստեղծել որոշ այլաբանական պատկերներ, որոնք վկայի կենսապատումը դարձրել են առավել գրավիչ.

Ջերկիր բնութեամբդ արօրեցեր տանջանօք...

*Որ յաշխարհի առեր հարիւրապատիկ
մըշակութեան ծաղիկ՝ ըզհրաշս առ մարդիկ,
վաստակդ անձին պըտողաբերէ զանմահ կեանս յերկրին...*

*Որպէս այգի յօղահատելով՝
պըտողաբերեր Քեզ հագարօք...*

*Որ ըստ անուան, զհոգւոց երկիր մշակեաց,
ըզկոտց փուշ հերքեաց եւ ըզվըկայս ծաղկեաց...*

*Որ քըրտնաջան երկրագործեաց...
Որ զհնուք զանձն, որպէս երկիր,
մըշակելով՝ զանունն էարկ ի կիր,
ծաղկեաց յաշխարհի, հարիւրապատիկ
պըտողաբերէ աստ եւ յերկին...*

Ծարականագիրը Գևորգ Ջորավարին, բնականաբար, գովերգել է նաև իբրև քաջարի զինվորի, որ արիաբար մարտնչել է չար ուժերը մարմնավորող վիշապի, Բելիար-սատանայի դեմ և հաղթել նրան: Կանոնի Տէր յերկնիցում ասված է.

*Վառեալ սուսերաւ բանի Հոգւոյն արութեամբ,
զյուսոյ սաղաւարտ եւ զհաւատոյ վահան զգեցար
քաջութեամբ,
ո՛վ սուրբ Գէորգէոս,
պատուեալ զօրագլո՛ւխս պարոց վըկայից:*

Նկատի ունենալով այս և համանման հատվածները, Գ. Հակոբյանը նկատել է, որ Պահլավունու այս կանոնը «ոչ միայն պարականոնների, այլև Ծարակնոցի մեջ եղած լավագույններից է: Այն գրված է մարտական մոտիվներով, որը նախատիպ է հանդիսացել Ներսես Ծնորհալու «Նորահրաշ պսակաւոր» և

Ս. Սարգիս գորավարին նվիրված «Ամենասուրբ Երրորդութեան» հոչակավոր, մարտաշունչ շարականների համար²⁵:

Գրիգոր Պահլավունին, որ հեղինակել է նաև այլ չափածո երկեր, անշուշտ օժտված է եղել բանաստեղծական շնորհով, սակայն ինչպես նկատել է Գ. Հակոբյանը, նրա «շարականները մեծ մասամբ մեկնաբանական և դավանաբանական են»²⁶: **Հիրավի, նա ավելի շատ իմաստասեր-աստվածաբան է, քան գեղագետ-քերթող: Ն. Թահմիզյանի բնորոշմամբ էլ՝ «Պահլավունու շարականները գեղեցկահարմար կտորներ են ընդհանրապես, ընտիր իմաստներով և պատշաճավոր երաժշտությամբ»**²⁷:

Այժմ անդրադառնանք Թադեոս առաքյալին, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներին և Թովմաս առաքյալին նվիրված կանոններին, որոնք ստեղծվել են 12-րդ դարում, և որոնց հեղինակների անունն առայժմ հնարավոր չէ ճշտել²⁸: Թադեոս առաքյալի կանոնը ևս գտնվել է 1159 թվականին գրչագրված Ծարակնոցում և սուրբ Գևորգի կանոնի հետ մեկտեղ ընդգրկվել է Կ.Պոլսի 1768 թվականի հրատարակության մեջ (էջ 661–666): Այս կանոնին «ոճով եւ քերթութեամբ» չափազանց մերձ են մյուս երկու կանոնները, այնքան, որ, մեր կարծիքով, դրանք նույն հեղինակի գրչի արգասիքն են: Թադեոս առաքյալի կանոնը, ըստ Ամատունու, գրել է կա՛մ Գրիգոր Պահլավունին, կա՛մ Ներսես Ծնորհալին, գուցեև մեկ այլ հեղինակ²⁹: Որոշակի է, որ հիշյալ երեք կանոններում ընդգրկված շարականները «ԺԲ եւ ԺԳ դարերում մուծուել էին եկեղեցի եւ... երգուում էին»³⁰:

²⁵ Գ. Հակոբյան, Ծարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V–XV), Երևան, 1980, էջ 296:

²⁶ Նույն տեղում, էջ 218:

²⁷ Ն. Թահմիզյան, Նշվ. աշխ., էջ 241:

²⁸ Գ. Մադոյանն առանց որևէ հիմքի Գրիգոր Անավարզեցուն է ընծայել նաև Թադեոս առաքյալի կանոնը (տե՛ս Գ. Մադոյան, Նշվ. աշխ., էջ 64–66):

²⁹ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 32:

³⁰ Նույն տեղում, էջ 39:

ԽՆդրո առարկա շարականները, հիրավի, «վայելուչ» են և արժանի ուշադրության, մանավանդ որ կանոններից երկուսը նվիրված են Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադիրներ Թադեոսին և Բարդուղիմեոսին և «հայկական թեմայի» յուրօրինակ արժարժումներ են: Ինչ վերաբերում է Թովմաս առաքյալին, ապա նրա անունը ևս բավական տարածված է եղել և մեծ համարում ունեցել Հայոց մեջ:

Անանուն շարականագիրը, բնականաբար, առավել բարձր է գնահատել Թադեոս առաքյալին, որը Հայոց առաջին լուսավորիչն էր: Նա, ըստ ավանդության, Հայաստան է բերել Հիսուսին խոցած գեղարդը: Հրաշքով բուժել է Աբգար թագավորին, ապա շատերի հետ դարձի է բերել նաև Հայոց Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտին, որի հետ և նահատակվել է Արտազ գավառում: Հետագայում հայտնաբերվել են նրա նշխարները, որոնց հիման վրա կառուցվել են նրա անունը կրող եկեղեցիներ:

Այս ամենն արձագանք է գտել Անանուն հեղինակի շարականներում: Այստեղ ցնծությամբ է ներկայացվում Թադեոսի քարոզչական առաքելությունը՝ լուսավորելու Թորգոմի և Արամի որդիներին.

*Այսօր ցընծան խրախճանապէս եկեղեցիք Հայաստանեայց
եւ պարեն ուրախութեամբ՝ համաձայնեալ հրաբուն զօրացն՝
սօնելով ըզյիշատակ առաքելոյն Թադէոսի,
վասն որոյ մաղթանօք սորա կեցո՛ղմեզ, մարդասէր Փրըկի՛չ:*

*Այսօր զընտրեալն յաշակերտաց եւ ի խըմբից
վարդապետաց՝
լուսաւորիչ որդոց Թորգոմայ.
վասն որոյ մաղթանօք սորա կեցո՛ղմեզ, մարդասէր Փրըկի՛չ:*

Գեղեցիկ են հլուսված հատկապես Մանկունքի հետևյալ տողերը, որտեղ դիմելով Քրիստոսին՝ շարականագիրն ասում է.

*Ողկո՛յզ՝ ծաղկեալ հրաշիք Հոգւոյն,
որ ճըմլեցար ի քառաթեւ հընձան խաչին*

*եւ արքուցեր հրեղէն գինեաւ զերանելին զԹաղէոս,
որով զմայլեալ անճատապէս՝ արքոյց զորդիս Թորգոմայ՝
ժառանգելով ըզկեանս անվախճան:*

Ծարականագիրն օրհնում է Տիրոջը, որ ոչ միայն Թաղէոս, այլև Բարդուղիմէոս առաքյալին է պարգևել «լուսաւորիչ Հայաստան երկրիս»: Ուստի դիմելով իր հայրենակիցներին՝ կոչ է անում.

*Արդ, եկա՛ք, հաստացեալք ժողովո՛ւրդք
Հայաստանեայց,
ի ձեռքն սուրբ առաքելոյն Բարդուղիմէի տո՛ւք օրհնութիւն
Հօր ի բարձունս...*

*Որ տեսիք ըզլոյս աստուածգիտութեան
ի ձեռքն Բարդուղիմէայ սուրբ առաքելոյն, ըզՏէ՛ր
օրհնեցէք...*

Ուշագրավ է հեղինակի այն միտքը, թե Աստված ի սկզբանե նախասահմանել էր Հայաստանի փրկությունը, ուստիև առաքել է այստեղ իր երկու ընտիր աշակերտներին:

12-րդ դարի և առհասարակ շարականագրության խոշորագույն դեմքը Ներսես Ընորհալին է: Քանի որ վերջինիս շարականները ներկայացրել ենք առանձին հատորով, որտեղ և արժևորել ենք նրա շարականային հարուստ ժառանգությունը³¹, ուստիև անդրադառնում ենք 12-րդ դարի հաջորդ խոշոր շարականագրին՝ նշանավոր պետական գործիչ և բազմարդյուն մատենագիր Ներսես Լամբրոնացուն (1153–1198):

Ներսես Լամբրոնացին Հոռմկլայի կաթողիկոսարանի դպրոցում աշակերտել է Ներսես Ընորհալուն, որի ազգականն է եղել, և որը նրան՝ տասնվեցամյա հասակում, ձեռնադրել է

³¹ Տե՛ս Ներսէս Ընորհալի, Ծարականներ, «Սարգիս Խաչենց, Փրինթինգթոն, Անտարես», Երևան, 2020:

քահանա և տվել իր անունը: Հետագայում, Շնորհալույն հաշորդած Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը Լամբրոնացուն ձեռնադրել է Տարսուհի արքեպիսկոպոս: Կյանքի վերջին տարիներին Լևոն Բ Մեծագործ թագավորի արքունիքում պաշտոնավարել է որպես աստեճադպիր, խորհրդատու և թարգմանիչ³²:

Ըստ մատենագրական տվյալների, Լամբրոնացին հեղինակել է մի շարք շարականներ³³: Դրանք նա, անշուշտ, գրել է իր ուսուցչի՝ Ներսես Շնորհալու հանձնարարությամբ: Այլ կերպ չէր կարող լինել, քանի որ Շարակնոցը էականորեն համալրվել է ժամանակի հայրապետների հեղինակած կամ հանձնարարած երգերով:

Ներսես Լամբրոնացին հորինել է Սուրբ Զատկի կանոնը: Հինգերորդ դարում արդեն ստեղծվել էին և հետագայում համալրվել Քրիստոսի Հարությանը նվիրված Հարցները, Մեծացուցե՛ները (հեղինակ՝ Մովսես Խորենացի) և Օրհնությունները (հեղինակ՝ Ստեփանոս Սյունեցի): Սակայն Շնորհալու ժամանակ, ըստ երևույթին, անհրաժեշտ է եղել ունենալ Սուրբ Զատկի առանձին ամփոփ կանոն, ինչը և իրագործել է Լամբրոնացին՝ գրելով նոր Օրհնություն (երկու պատկերով) և նոր Հարցն՝ իր կազմով (Մեծացուցե՛, Ողորմեա, Տէր յերկնից)³⁴:

Լամբրոնացին է հեղինակել նաև Կրկնազատկի (կամ Նոր Կիրակիի) կանոնը, որն ունի Սուրբ Զատկի կանոնի կազմությունը:

Դեռևս 7-րդ դարում Անանիա Շիրակացին ստեղծել է Քրիստոսի Համբարձմանը նվիրված օրհներգերի նախնական կարգը: Քանի որ այդ օրհներգերը վերաբերում են Քրիստոսի Հարությանը և ոչ թե ուղղակիորեն Համբարձմանը, ուստի Շնորհալին հանձնարարել է Լամբրոնացուն գրել օրվա խորհուրդը ներկայացնող շարականների նոր կանոն: Շարակնոցում այն

³² Նրա մասին մանրամասն տե՛ս Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971:

³³ Տե՛ս Հ. Անապան, Նշվ. աշխ., էջ LXVII–LXVIII, Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 106, 113–114, Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 25–26:

³⁴ Հայտնի է Սուրբ Զատկի կանոնի մի անվավեր Մեծացուցե՛, որի հեղինակն անհայտ է (տե՛ս Ս. Ամատունի Նշվ. աշխ., էջ 99–100):

կցված է Օիրակացու հեղինակած կարգի սկզբին: Լամբրոնացու այս կանոնն էլ ունի նախորդների կազմը. վերջում միայն դրել է մի Համբարձի՝ ամփոփելով Համբարձման հին և նոր կանոնները³⁵:

Պահպանվել է Համբարձման կանոնի մի անվավեր և թերի Օրհնութիւն, որը Ս. Ամատունու կարծիքով, «թերևս Լամբրոնացու գրածն է»³⁶:

Հոգեգալստյան առաջին օրվա կանոնը (կարգը) գրել է Մովսես Խորենացին, իսկ երկրորդ-հինգերորդ օրերի կանոնները՝ Ներսես Շնորհալիւն: Ինչ վերաբերում է վեցերորդ և յոթերորդ օրերի կանոններին, ապա դրանք, ըստ Գ. Ավետիքյանի. «ոչ համարին Շնորհալույն Ներսէսի... օրինակ ինչ դէ՛՛ Ներսէս Լամբրոնացույ»³⁷: Հիմք ընդունելով այդ վկայությունը, ինչպես նաև այդ կանոնների լեզուն ու ոճը, գտնում ենք, որ դրանք, իսկապես, հեղինակել է Լամբրոնացին՝ կատարելով Շնորհալու հանձնարարությունը³⁸: Ասենք նաև, որ Լամբրոնացին պահպանել է Շնորհալու մշված կանոնների կազմությունը (Օրհնութիւն՝ երկու պատկերով և Հարցն՝ իր կազմով) և վերջին կանոնն ավարտել է Համբարձիով, որն այս անգամ էլ ամփոփում է Հոգեգալստյան կանոնաշարքը:

Լամբրոնացին ստեղծել է նաև մի առանձին կանոն՝ մվիրված «Որդւոց և թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչիւն»: Պահպանվել են այս կանոնի անվավեր դարձած մեկական Մանկունք և Ծաշու³⁹, որոնք թերևս այլ հեղինակի (կամ հեղինակների) գործեր են:

Քրիստոսի Հարության առաջին խոշոր օրհներգուն Քերթողահայր Խորենացին է, որը ութաշարք Հարության

³⁵ Լամբրոնացին հեղինակել է նաև Համբարձմանը մվիրված ներբող (տե՛ս Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, էջ 197 և հոսն.):

³⁶ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 103: Պահպանվել են նաև այս կանոնի երեք անվավեր Մեծացուսցեներ, որոնցից երկուսը հեղինակել է Վարդան Վարդապետը (տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 104-105):

³⁷ Գ. Աւետիքեան, Նշվ. աշխ., էջ 399:

³⁸ Լամբրոնացին Հոգեգալստյանը մույնպես մվիրել է մի ներբող (տե՛ս Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, էջ 197 և հոսն.):

³⁹ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 114:

Հարցների և Մեծացուցեաների հիմնական հեղինակն է: Նրա հետևությանը և ազդեցությանը Ստեփանոս Սյունեցին գրել է Հարության Օրհնութիւնները: Այնուհետև այդ թեմայով օրհներգեր է հեղինակել Անանիա Ծիրակացին (Համբարձման կարգում): Ավելի ուշ թեման լավագույնս արծարծել են Գրիգոր Նարեկացին և Ներսես Ընորհալին՝ առավելապես տաղերգության ժանրում: Ներսես Լամբրոնացին, փաստորեն, Մովսես Խորենացուց և Ստեփանոս Սյունեցուց հետո օրհներգության ասպարեզում ծրագրված կերպով անդրադարձել է Հարությանը՝ ստեղծելով Սուրբ Զատկի և Կրկնազատկի կանոնները:

Լամբրոնացու՝ Սուրբ Զատկին նվիրված երգերը ևս ողողված են հոգեղեն լույսով ու խնդությանը: Հատկապես առանձնանում է կանոնի առաջին Օրհնութիւնը, որը լուսերգության գրավիչ նմուշ է.

*Այսօր անճառ Լոյսն ի Լուսոյ
լուսատրեաց զմանկունըս քո,
լուսատրեա՛, Երուսաղէ՛մ,
քանզի յարեաւ Լոյս քո Քրիստոս...*

*Այսօր խաւարն անգիտութեան
հալածեցաւ եռեակ Լուսովն,
եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան
յարուցեալն ի մեռելոց Քրիստոս...*

Ն. Թահմիզյանը քննելով այս Օրհնութեան եղանակը, գրել է, թե այն «իր մեղմորեն ծփուն, մերթ խորհրդավոր նկարագրով զարմանալիորեն մխիթարիչ և մերթ ավելի սրտամոտ, ջերմ ու լուսավոր բնույթով, ուրախարար ելևէջներով իրոք բանաստեղծական մի կերպար է մարմնավորում»⁴⁰:

Սակայն Լամբրոնացու՝ Զատկի կանոնի շարականները գրական-գեղարվեստական կատարման առումով էական նորություն չեն բերում: Առավել նորաշունչ են Կրկնազատկին ձոնված շարականները: Կրկնազատկիը, որ Զատկին հաջորդող առաջին Կիրակին է, խորհրդանշում է ոչ միայն Քրիստոսի Հա-

⁴⁰ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 261:

րույթունը, այլև Աստծո Եկեղեցու բարգավաճումը Տիրոջ Հարությամբ: Դարձի եկած հեթանոսների եկեղեցիները (համայնքները) համարելով Քրիստոսի միջոցով նորոգված կղզիներ՝ շարականագիրը բացականչում է այսպիսի ոգեշունչ խոսքերով.

*Նորոգեալ կրղզի՛ք առ Աստուած, եկեղեցի՛ք հեթանոսաց,
ի գրլխոց լերանց գոշմամբ ձա՛յն տուք ըզփառս Աստուծոյ
ես պատմեցէ՛ք քաջութիւն Յարուցելոյն ի մեռելոց:*

*Երկնատր Փեսային հարսնացեալ Եկեղեցի՛ Աստուծոյ,
զարդարեա՛ր ի ներքոյ՝ ի հանդերձս յոսկէհուորն պրսակեալ,
քանզի ահա գայ առ քեզ Քրիստոս փառաց Թագաւորն:*

Բավական արտահայտիչ են նաև Կրկնազատկի կանոնի Տէր յերկնիցի հետևյալ տողերը.

*Այսօր, մանկո՛ւնք հաւատոյ, կատարելով զնաւակատիս
վերինն Երուսաղէմի,
նորոգեցէ՛ք ըզպատմուճան հոգւոց ձերոց
ես ընդ որդւոց Լուսոյ Նոր Սիօնի բարեբանեցէ՛ք
զՔրիստոս Թագաւորըն.
ասելով – Փառաորեա՛լ է Քո Յարութիւնը:*

Այսպիսի ոգեշունչ տողեր կան նաև Համբարձման կանոնում: Այստեղ օրհներգուն Գրիգոր Նարեկացու տաղերի ազդեցությամբ ներկայացրել է համբարձվող Տիրոջ մասին հրեշտակների հարց ու պատասխանները, որոնց շնորհիվ շարականի պատումը դարձել է առավել աշխույժ ու հետաքրքիր, ինչպես օրինակ.

*– Ո՞վ է սա Թագաւոր փառաց:
– Սա է մարմնացեալ Բանն Աստուած,
որ ի խաչին ըզմեղս ըսպան
ես վերսպացեալ՝ փառօք գայ յերկինս
Տէր հրզօր զօրութեամբ Իւրով:*

Հոգեգալուստը ևս առաջինը օրհներգել է Խորենացին, որին հետևելով՝ Շնորհալին ստեղծել է տոնի երկրորդ-հինգերորդ օրերի կանոնները և հանձնարարել է Լամբրոնացուն գրել վերջին երկու օրերի կանոնները: Դժվար էր այդ երկու խոշոր քերթողներից (և Նարեկացու համապատասխան տաղերից) հետո մշակել նույն թեման և քիչ թե շատ նորովի հնչող խոսք ասել: Բայց դա հաջողվել է Լամբրոնացուն. որն, իբրև մտածող և ստեղծագործող, ուներ շեշտված անհատականություն: Նա ևս Սուրբ Հոգուն պատկերել է իբրև աստվածային լույսը տարածող կենարար Հուր և մեղքերը լվացող կենսաբեր Ջուր: Ծարունակելով հայ լուսերգության ավանդույթները՝ Լամբրոնացին գովերգում է Լույսի Աղբյուր Սուրբ Հոգուն՝ ձայնակցելով առաջյալների օրհներգությանը.

*Ի Հարաշարժ աղբերէն անհատահոսող Վըտա՛կ,
կենդանարար Սուրբ Հոգի՛, օրհնեալ ես, Լո՛յս
ճըշմարիտ:*

*Հըրճոողական խընդութեամբ աշակերտացըն լըցեալ՝
փատաորելով երգէին – Օրհնեալ ես, Լո՛յս ճըշմարիտ:*

Գեղեցիկ է սերովբեների վրա երկնքում սավառնող Սուրբ Հոգու պատկերը.

*Որ ի թելըս թեթելըս, աննիթ՝ աստանեալ
եւ հրացայտող սերովբէից վերանըստեալ՝
տեսչութեամբ խնամես զարարածըս,
Հոգի՛դ Սուրբ, օրհնեալ ես յարարածոց Քոց:*

Հատկապես ուշագրավ է վերջին կանոնն ամփոփող Համբարձին, որ Սուրբ Հոգուն ներկայացնող ուսուցողական տրակտատի արժեք ունի: Այստեղ լավագույնս դրսևորվել են Լամբրոնացու թե՛ աստվածաբանական և թե՛ բանաստեղծական շնորհները: Պատկերացում տալու համար կարդանք հենց առաջին տունը.

*Հոգին Սուրբ է՛ր միշտ եւ է՛ եւ եղիցի՛.
ո՛չ ըսկըսեալ եւ ո՛չ դադարեալ,*

*այլ միշտ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ կարգեալ եւ թուեալ
եւ միշտ օրհնեալ է ի յաւիտեան:*

Սուրբ Հոգին եղել է «միշտ ընդունող, սրբող եւ լցուցիչ, աստուածացուցիչ», «մշտաշարժ, ինքնաշարժ, ինքնիշխան, ինքնագօր, ամենագօր», «աներեւոյթ, անժամանակ, անայլայլելի, անփոփոխելի», «առանց որքանութեան, առանց որպիսութեան, առանց տեսութեան, անշօշափելի», «Կեանք եւ կենդանարար, Լոյս եւ գոյացուցիչ լուսոյ, Ինքն բարի, Աղբիւր բարութեան, Հոգի ուղիղ առաջնորդական», «Հոգի զօրութեան եւ երկիրի»: Նա «շնչէ ուր կամի, որքան ախորժէ, յորժամ եւ որքան», նրանով «Հայր ճանաչի եւ Որդի փառաւորի»: Հիշարժան է հատկապէս հետևյալ տունը, որտեղ Սուրբ Հոգին ներկայացվում է որպէս ինքը իրեն Տաճար կերտող.

*Տէր առաքիչ, որոշիչ, Տաճար սոցէ Ինքըն Ինքեան,
առաջնորդէ, զօրացուցանէ,
որպէս եւ կամի՝ բաժանէ ըզընդորես
եւ միշտ օրհնեալ է ի յաւիտեան:*

Գրիգոր Նարեկացու որոշակի ազդեցությամբ հորինված այս շարականը թերևս լավագույնն է Հոգեգալստյան յոթ կանոններում ընդգրկված երգերի մեջ, որոնցով մեր երեք խոշոր քերթողներն ըստ ամենայնի օրհնաբանել են Սուրբ Հոգուն:

Եթե Խորենացին և Ծնորհալին ստեղծել են Հայոց առաջին Հայրապետ Գրիգոր Լուսավորչին նվիրված կանոններ, ապա Լամբրոնացին առանձին կանոն է ձոնել նրա որդիներին և թոռներին, որոնք նույնպես հայ Եկեղեցու տոնելի սրբեր են: Կանոնի Մանկունքում շարականագիրն առանձին-առանձին անդրադարձել է Լուսավորչի որդիներ Արիստակեսին, Վրթանեսին և վերջինիս որդիներ Հուսիկին և Գրիգորիսին: Ուշագրավ է, որ Մանկունքի վերջին տունը հեղինակը հատկացրել է Դանիել քորեպիսկոպոսին, որը Լուսավորչի աշակերտն էր և Հուսիկի սպանությունից հետո Հայոց կաթողիկոս է ընտրվել: Նրա հիշատակը հայ Եկեղեցին տոնում է Լուսավորչի որդիների և թոռների հետ մեկտեղ:

Լամբրոնացին առաջինն է հայ քերթության մեջ գովերգել

այս նշանավոր ազգային սրբերին, և նրա խոսքը հնչում է ջերմ հայրենասիրությամբ.

*Որ վերըստին զարդարեցեր զԵկեղեցիս Հայաստանեայց
արփիափայլ ճառագայթիւք լուսագարդեալ շտաաիղօք
Սըրբոյն Գրիգորի,
օրհնենք ըզՔեզ, Աստուա՛ծ հարցըն մերոց:*

*Որ լուսատրեցեր զԵկեղեցիս Հայաստանեայց լուսով Քո,
Քրիստո՛ս,
եւ զարդարեալ՝ նորացուցեր պայծառ ծագմամբ
շտաաիղօք Սըրբոյն Գրիգորի.
աղօթիւք սոցա ողորմեա՛:*

Ասենք, որ ժամանակին Գ. Զարպիհանայանը, ապա նաև Մ. Աբեղյանը գեղարվեստական կատարման առումով անարժեք են համարել Լամբրոնացու հոգևոր երգերը⁴¹: Իրավացիորեն մերժելով նրանց կարծիքները, Գ. Հակոբյանը գրել է. «Լամբրոնացու շարականների պարզությունը, անմիջականությունն ու ջերմությունը, ճարտասանական ձևերի ինքնուրույնությունը, կենսախիճի մոտիվները և հայրենասիրական ոգին գալիս են հաստատելու, որ այդ շարականները ոչ միայն զուրկ չեն բանաստեղծական արժեքից, այլև դրանք նորություն, թարմություն, կենսասիրություն մտցրին մեր հոգևոր երգի մեջ»⁴²:

Ներսես Լամբրոնացու աշակերտը և գործընկերն է եղել նույնպես Լամբրոնում ծնված և Սկևռա նշանավոր վանքում մանկավարժական և մատենագրական լայն գործունեություն ծավալած վարդապետ **Գրիգոր Սկևռացին** (1160–1170-ական թթ. – մոտ 1230-ական թթ.): Ի թիվս այլ գործերի, գրել է ուսուցչին նվիրված մի արժեքավոր ներբողյան: Գրչագրել է վերջինիս

⁴¹ Տե՛ս Գ. Զարպիհանալեան, Հայկական թիւ դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1894, էջ 660: Մ. Աբեղյան, Նշվ. հրատ., էջ 167:

⁴² Գ. Հակոբյան, Ծարականների ժանրը, էջ 254:

ցին: Եղել է հմուտ երաժիշտ-վարդապետ: Գործել է բուն Հայաստանում՝ Հաղարծնի և Հաղպատի վանքերում:

Ինչպես գրում է Ն. Թահմիզյանը, «Ներսես Ծնորհալու կրտսեր ժամանակակիցը՝ Տարոնեցին, քաջ տեղյակ է եղել հոգևոր երաժշտության կիլիկյան դպրոցի ձեռքբերումներին, ի մոտո հաղորդվել դրանց և, հիմք ընդունելով կիլիկիայում խմբագրված-խազավորված տարբեր երգարաններ, խազագրության արվեստի նոր մակարդակ ստեղծել Հաղբատում և առհասարակ պատմական Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում»⁴⁶:

Սարգիս Երեցի վկայությամբ, Խաչատուր Տարոնեցին է հեղինակել «Գլխորհուրդ խորին»⁴⁷: Խոսքը շարական համարված նշանավոր «Ջգեստու պատարագին» ծիսակարգային երգի մասին է: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Խաչատուր Տարոնեցին եղել է գանձագիր, և գանձի ժանրին է պատկանում նաև խնդրո առարկա երգը: Այն տեղ է գտել թե՛ Պատարագամատուցում և թե՛ Ծարակնոցում: Այս երգն իր կառուցվածքով ևս «առավել մոտիկ է գանձերին, որով ուշ միջնադարում ընդհանրացած նրա «շարական» անվանումը շատ պայմանական է»⁴⁸:

Երգի վերջին տունը կրճատվել, անվավեր է դարձել⁴⁹: Այն վերականգնելիս՝ տների սկզբնատառերով հողվում է **Խաչատուր**: Մի շարք ուսումնասիրողներ այս երգն իր մեղեդիով հանդերձ համարել են Խաչատուր Տարոնեցու գլուխգործոցը: Համոզվելու համար բերենք երկու տուն.

*Խորհո՛ւրդ խորին, անհաս, անսկիզբըն,
որ զարդարեցեր զվերին պետությունդ
ի յառագաստ անմատոյց լուսոյն
զերսպանձ փառօք զդասըս հրեղինաց:*

*Որ զարարչագործ բազուկըս Քո
տարածեցեր ընդդէմ աստեղաց,*

⁴⁶ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 278:

⁴⁷ Հ. Անապյան, Նշվ. աշխ., էջ LXVIII:

⁴⁸ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 282:

⁴⁹ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 173:

*հաստատեա՛ գրագուկրս մեր կարողությամբ՝
համբարձմամբ ձեռաց առ Քեզ միջնորդիլ:*

Այս երգի մեղեդին քննելուց հետո Ն. Թահմիզյանը գրել է. «Երաժշտական բաղադրիչի հետ միասին, քննարկվող կոթողն աչքի է ընկնում որպես Նարեկացու և Շնորհալու ավանդույթների ստեղծագործական կիրառման վառ նմուշ»⁵⁰:

Անկասկած, Խաչատուր Տարոնեցին է հեղինակել նաև հարսանիքի զգեստի օրհնությանը նվիրված ծիսակարգային երգը կամ շարական վերակոչված գանձը: Այն ևս հոդում է հեղինակի անունը (չեն պահպանվել երգի վերջին երկու-երեք տները)⁵¹: Առաջին իսկ տան ընթերցմամբ զգացվում է, որ դարձյալ գործ ունենք բարձրակարգ ստեղծագործության հետ.

*Խաչանիշ դրոշմամբ նըշանի պարագրական փառօք
պըսակեալ՝*

*ի կարմրութիւն ձորձոյ, ծիրանոյ, ոսկիաթել բեհեզի՝
օրհնեա՛, Միածի՛ն, ըզհանդերձ հարսանեաց...*

Խաչատուր Տարոնեցուց հետո Վարդան Վարդապետ Արևելցին և Հովհաննես Պլուզ Երզնկացին ևս հայ հոգևոր երաժշտության կիլիկյան դպրոցի ձեռքբերումները տարածեցին բուն Հայաստանում...

Շարականների հեղինակ է նաև **Հակոբ Կլայեցին (Մեծքարեցի)**, մոտ 1206–1286): Կոստանդին Ա Բարձրաբերդոցուց հետո ընտրվել է հայոց կաթողիկոս (1268-ից): Գահակալության տարիներին ըստ ամենայնի ամրապնդել է հայ Եկեղեցու և Կիլիկյան պետության հիմքերը: Եղել է ճարտար հռետոր, մեկնիչ և բանաստեղծ:

Ըստ ձեռագիր աղբյուրների, Հակոբ Կլայեցին ստեղծել է Աստվածածնի ծննդյան տոնին նվիրված շարականների կանոնը, որով բացվում է Շարակնոցը⁵²: Հայտնի է Աստվածածնի

⁵⁰ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 282:

⁵¹ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 171–172: Տե՛ս նաև «Բագմավեպ», 1882, էջ 319:

⁵² Հ. Անապան, Նշվ. աշխ., էջ LX VIII–LXXIII, LXXIII:

ծնունդին նվիրված մի պարականոն շարական, որը, Ս. Ամատունու կարծիքով, նույնպես հեղինակել է Հակոբ Կլայեցին⁵³: Սակայն այդ շարականը, հավանաբար, ստեղծվել է ավելի շուտ, քանզի կարծում ենք, որ Կլայեցուց առաջ արդեն պիտի որ առնվազն մեկ շարական լիներ Աստվածածնի ծննդյան հիշատակին:

Սարգիս Երեցի վկայությամբ, Հակոբ Կլայեցին է հեղինակել նաև Տարագոսյան սրբերին նվիրված Մանկունքը, որ պարականոն է դարձել⁵⁴: Թերևս հեղինակել է նաև այլ շարականներ, որոնք, սակայն, մեզ հայտնի չեն: Ավելացնենք, որ Կլայեցին, ըստ երևույթին, իր շարականները գրել է մինչև կաթողիկոս ընտրվելը, քանի որ մշված ձեռագիր աղբյուրներում նա հիշվում է իբրև վարդապետ կամ եպիսկոպոս: Կարծում ենք, որ տվյալ պարագայում, ինչպես Վարդան Վարդապետը, Հակոբ Կլայեցին ևս կատարել է Կոստանդին Բարձրաբերդցու հանձնարարությունը:

Աստվածածնի ծննդյան կանոնն ընդգրկում է Օրհնութիւն (երկու պատկերով), Հարցն, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր յերկնից, Ճաշու և Համբարձի: Երևում է, որ շարականագիրը քաջածանոթ է 5-րդ դարից սկիզբ առած մարիամերգությանը, որի ավանդույթներին խարսխված՝ պատշաճորեն հորինել է իր շարականները: Կանոնն աչքի է ընկնում կոկիկ կազմվածքով և համակված է ցնձագին տրամադրությամբ, ինչպես.

*Այսօր աստեղք եւ յուսին ընդ արեւու հըրճուելով՝
գովեն ըզԼուսն ի Հօրէ յաւոր ծընընդեան Լուսոյ Մօրն:*

*Այսօր ծերքն օրինականք՝ մանկամբք Նորոյ Սիօնի,
երիտասարդք եւ կուսանք խընդան ծընընդեամբ Տիրուհոյն:*

Այսուհանդերձ Հակոբ Կլայեցուն բավական պակասում է բանաստեղծական ձիրքը, ուստիև նա կարողացել է ընդամենը ճաշակով կիրառել ավանդական պատկերներն ու կարծրատի-

⁵³ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 1:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 162–163:

պերը և օրհներգել Աստվածամոր ծնունդը՝ Էականն անորություն չբերելով մարիամերգության մեջ⁵⁵:

Նույնը կարելի է ասել նաև Տարագոսյան սրբերին նվիրված Մանկունքի մասին:

Մեկ պարականոն շարական է հայտնի 13-րդ դարի մատենագիր Հովհաննես Գառնեցու անունով⁵⁶: Սարգիս Երեցի վկայությամբ, «Յիսուս միածին քաղցր եւ գ(թած) սուրբն հաւրն Յովհաննիսի Գառնեցո է ասացեալ»⁵⁷: Այդ երգը գրված է Հանգստյան կամ Ննջեցեղոց կանոնի համար. բաղկացած է տասնհինգ տներից, որոնց սկզբնատառերով հողվում է հեղինակի անունը՝ **Յովհաննէս Գառնեցի**: Եռատող տների երկրորդ-երրորդ տողերը կազմում են հետևյալ կրկնակը.

*Աղաչեմ՝ ողորմեա՛ անձին բազմամեղիս
եւ խընայեա՛՝ փըրկիլ ի գեհեճոյն յախտեճից:*

Փաստորեն, տարբեր են միայն տների առաջին տողերը: Դրանց մեծ մասը (ինչպես և կրկնակը) ուղղված է Հիսուս Միածնին, որին հեղինակը դիմում է ավանդական մակդիրներով («քաղցր եւ գթած», «անոխակալ յամենայնի», «արդարադատ եւ ճշմարիտ»): Սակայն Գառնեցու բուն նպատակն է ոչ թե փառաբանել Քրիստոսին, այլ իր անձնական մեղսալից կյանքը ներկայացնելով՝ հայցել Տիրոջ ողորմածությունը և նրա երկրորդ գալստյանը թողության արժանանալ: Նա ավանդական պատկերներով ներկայացնում է նաև Ահեղ դատաստանը, միշտ, սակայն, նպատակակետ ունենալով իր անձի փրկությունը: Եվ այդ անձնական մոտիվն է, որ քիչ թե շատ հրապուրիչ է դարձնում Գառնեցու շարականը.

*Ողորմելի եւ եղկելի կենօք կացի ի յաշխարհի...
Վիրօք լըցայ եւ խոցեցայ նետիք չարին մեզսասիրին...*

⁵⁵ Կանոնի երաժշտական բաղադրիչի վերաբերյալ տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 264-265:

⁵⁶ Հովհաննես Գառնեցու մասին տե՛ս Հ. Անասյան, Նշվ. աշխ., էջ XLVI, LI, LXXV:

⁵⁷ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 188:

Այնուհետև՝ «մի՛ հատուցես ըստ գործոց իմոց», «Ներմա՛մբ նայեա՛ եւ ողորմեա՛ հոգւոյ իմոյ», «մի՛ մերժեսցես զիս ի ձեռաց» և այլն: Եվ այս գուտ **անձնական** մոտիվն է պատճառը, որ Հովհաննէս Գառնեցու շարականը հայտնվել է պարականոնների շարքում:

Հովհաննէս Գառնեցին թերևս հեղինակել է նաև այլ շարականներ, որոնք մեզ հայտնի չեն: Գիտենք միայն, որ նա ջանքեր է գործադրել սաղմոսերգության և որոգության ասպարեզում⁵⁸:

Ասենք նաև, որ 13-րդ դարի նշանավոր մատենագիր **Մխիթար Այրիվանեցին**, իր իսկ վկայությամբ, գրել է մի շարական՝ նվիրված Ստեփանոս Սյունեցուն (8-րդ դ.)⁵⁹: Այդ շարականը, սակայն, դուրս է մնացել Ծարակնոցից և առայժմ հայտնաբերված չէ:

Բեղմնավոր շարականագիր է նշանավոր մատենագիր, մանկավարժ, երաժիշտ-տեսաբան **Վարդան Վարդապետ Արևելցին** (մոտ 1200–1271): Գործել է թե՛ բուն Հայաստանում և թե՛ Կիլիկիայում՝ մասնակցելով երկրի պետական, եկեղեցական և մշակութային կյանքին⁶⁰:

1241 թվականին Վարդան Վարդապետը Հոռմկլայում հանդիպել է Կոստանդին Ա Բարձրաբերդի կաթողիկոսի հետ և իր նպաստը բերել նրա եկեղեցական ու մշակութային ծրագրերին: Կաթողիկոսի հանձնարարությամբ գրել է որոշ գործեր և հայերեն թարգմանել Միքայել Ասորու ժամանակագրությունը: Կարծում ենք, որ հայ մշակույթին մեծապես զարկ տված հայրապետի հանձնարարությամբ է Արևելցին ստեղծել նաև իր շարականները: Անհրաժեշտ է նշել, որ այս ժամանակաշրջանում դարձյալ կարիք է զգացվել թե՛ համալրելու և թե՛ վերախմբագրելու Ծարակնոցը: Ծիսարանի հատկապես երաժշտական

⁵⁸ Տե՛ս **Ն. Թահմիզյան**, Գրիգոր Նարեկացին..., էջ 301:

⁵⁹ Տե՛ս **Գ. Յովսէփեան**, Մխիթար Այրիվանեցի, Երուսաղէմ, 1931, էջ 22:

⁶⁰ Տե՛ս **Յ. Ոսկեան**, Վարդան Արևելցի, «Հանդէս ամսօրեայ», 1921, թիվ 7–12: **Փ. Անթաբլյան**, Վարդան Արևելցի, կյանքն ու գործունեությունը, հտ. 1, Երևան, 1987, հտ. 2, Երևան, 1989:

հիմնավոր խմբագրումը նախ կատարում է հմուտ երաժիշտ, խազագետ-տեսաբան Գրիգոր Խուլը, ապա՝ Վարդան Վարդապետի աշակերտ Գևորգ Սկևռացին: Նրանց շնորհիվ «կլիլիկյան երգարաններն ստանում են իրենց ավարտուն տեսքը թե՛ գրական և թե՛ երաժշտական առումով»⁶¹: Ինքը՝ Վարդան Վարդապետը, գրել է «Անթառամ ծաղիկ» Ճաշու-Մեծացուսցեի տեսությունը⁶² և Ծարակնոցը համալրել նոր կանոններով ու շարականներով: Հայտնի են նրա հեղինակած բազմաթիվ կանոնական և պարականոն շարականներ⁶³:

Կանոնական Ծարակնոցում առկա են Վարդան Արևելցու հետևյալ գործերը.

«Կանոն Յովակիմայ և Աննայի՝ ծնողաց Սրբուհույ Աստուածածնին»: Ունի Օրհնություն (երկու պատկերով), Հարցն,

⁶¹ Ն. Թահմիզյան, Հիմնական խազերի միակցությունը. «Բանբեր Մատենադարանի», հտ. 9, Երևան, 1969, էջ 110:

⁶² Ն. Թահմիզյանի համոզմամբ, Վարդան Վարդապետը կատարել է այդ շարականի վերաեղանակավորումը (տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ, 283-287): Անընդունելի է վաղ անցյալում հայտնված այն կարծիքը, թե այդ շարականի գրական բնագրի հեղինակը ինքը՝ Վարդան Արևելցին է (տե՛ս Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վեներիկ. 1862, «Յառաջաբան», էջ Ե):

⁶³ Տե՛ս Հ. Անասյան, Նշվ. աշխ., էջ LXVI-LXVIII: Տե՛ս նաև Ս. Ամատունի, Նշվ. աշխ., անվանացանկի Վարդան Բարձրաբերդցի անվան էջերը: Վարդան Վարդապետի շարականները Ամատունին վերագրել է նրա կրտսեր ժամանակակից Վարդան Բարձրաբերդցուն: Նա հիմք է ընդունել Սուրբ Սարգսին ձևված պարականոն Օրհնությունը, որտեղ շարականագիրը հղել է Վարդանի Պատմությունը («Ի դաշտ ծաղկածին, գոր յիշէ Վարդան», էջ 57): Իրողությունն այն է, որ այստեղ պատմագիր-շարականագիր Վարդան Արևելցին հղել է իր իսկ Պատմությունը: Ասեմք նաև, որ Արևելցու շարականներն ընդօրինակած գրիչ Սարգիս Երեցը դրանց հեղինակին կոչում է «սուրբ» կամ «մեծ» Վարդան. իսկ այդ մակդիրներով մեծարվել է Վարդան Վարդապետ Արևելցին և ոչ ամենևին Վարդան Բարձրաբերդցին: Ի դեպ ժամանակին թուրիմացաբար վերջինիս է վերագրվել նաև Վարդան Արևելցու պատմագրական երկը: Պ. Խաչատրյանը գտնելով հանդերձ, որ Վարդան Բարձրաբերդցին «Անցյալում շփոթվել է Վարդան Մեծի (Արևելցի) հետ, և վերջինիս շատ գործեր վերագրվել ու հրատարակվել են Բարձրաբերդցու անունով», այնուամենայնիվ Բարձրաբերդցուն է համարել պարականոն շարականների հեղինակ՝ չնկատելով, որ դրանք Վարդան Մեծի գործերն են (տես «Գանձարան հայ հին բանաստեղծության», էջ 910):

Մեծացուցե՛ք, Ողորմեա, Տէր յերկնից և Ճաշու: Ասե՛նք, որ Հովակիմին ու Աննային անվիրված մի անանուն պարականոն Օրհնութիւն է հրապարակել Ս. Ամատունին, ըստ որի, այդ երգը Վարդան Վարդապետի հեղինակած «Օրհնութիւնից աւելի հին է»⁶⁴: Սա նշանակում է, որ Աստվածածնի ծնողների տոնը մեր Եկեղեցին նշել է 13-րդ դարից ավելի վաղ, և այդ տոնն ունեցել է իր առանձին շարականը, մինչև Վարդան Վարդապետն այն փոխարինել է առանձին կանոնով:

Օրհնութիւն՝ Տասներկու առաքյալների կանոնի համար: Այս կանոնն անվավեր է դարձել: Պահպանվել են միայն պարականոն Մանկունքը և Ճաշուն, որոնք հավանաբար հեղինակել է Ներսես Ընորհալին: Վարդան Վարդապետի Օրհնութիւնը կանոնական Ծարակնոցում մնացել է իբրև առանձին շարական:

Օրհնութիւն՝ Սուրբ Սարգիս Զորավարի կանոնի համար⁶⁵, որը հավանաբար, Վարդան Վարդապետի հանձնարարությամբ, ստեղծել է Հովհաննես Երզնկացին: Սակայն այս կանոնը ևս անվավեր է դարձել, և այս անգամ էլ կանոնական Ծարակնոցում մնացել է միայն Վարդան Վարդապետի Օրհնութիւնը, որպես առանձին շարական (ինչպես և՛ Ներսես Ընորհալու հեղինակած Մանկունքը, որ ընդգրկվել է Մարտիրոսաց կանոնում):

Օրհնութիւն (երկու պատկերով՝ Սուրբ Թարգմանչաց կանոնի համար⁶⁶: Այս կանոնի հիմնական մասը կազմում է Մեսրոպ Մաշտոցին անվիրված օրհներգերի կարգը, որ հեղինակել է Հովհան Մանդակունին: Երբ հայ Եկեղեցին սահմանեց Թարգմանչաց տոնը, Ծարակնոցում Մաշտոցին անվիրված կարգին հավելվեցին Վարդան Վարդապետի Օրհնութիւնները՝ նշելու

⁶⁴ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 2:

⁶⁵ Այս Օրհնութիւնը վերագրվել է նաև Ներսես Ընորհալուն: Մինչդեռ շարականների հեղինակների բոլոր ցանկերն այդ շարականն ընծայում են Վարդան Վարդապետին:

⁶⁶ Ս. Ամատունին ենթադրել է, որ Վարդան Վարդապետն է գրել նաև այս կանոնի անվավեր դարձած Ճաշուն (տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 139): Սակայն այս վերագրման համար հիմք չկա: Ընդունելի չէ նաև այն կարծիքը, թե Թարգմանչաց ամբողջ կանոնի հեղինակը Վարդան Վարդապետն է (տե՛ս «Գանձարան հայ հին բանաստեղծության», էջ 903):

համար մաս մյուս սրբացած թարգմանիչ-վարդապետների հիշատակը: Ինչպես գրում է Վ. Ներսիսյանը, «XIII դարում արդեն թարգմանիչ ասելով ենթադրվում էր ոչ միայն Մեսրոպ Մաշտոցը (կամ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը): Ավելի գործածական էր բառի հոգնակի ձևը՝ «թարգմանիչք», որովհետև Թարգմանչաց տոմին հիշելի ու մեծարելի անուններ էին մաս Եղիշեն, Մովսես Քերթոզը (Խորենացին – Հ. Բ.), Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին»⁶⁷: Նարեկացին և Շնորհալին, անշուշտ, այս խմբին ավելի ուշ են միակցվել, և այդ ժամանակ կանոնը նվիրված է եղել «Սրբոց Թարգմանչաց Սահակայ եւ Մեսրոպայ, եւ աշակերտաց նոցա (ընդգծումը մերն է – Հ. Բ.)»⁶⁸:

Վարդան Արևելցու մյուս շարականները անվավեր են: Նշենք մաս այդ գործերը:

Հավելումներ Մովսես Խորենացու հեղինակած «Մեծացուցեք Յարութեան Տեառն» կարգում:

«Վերնական բարեաց բաշխմանն գործակից» – Սարգիս Երեցի վկայությամբ, այս Մեծացուցեքն «Սուրբ վարդապետին Վարդանա է ասացեալ»⁶⁹:

«Հրաշագեղ ծաղիկ յուսոյ Մարիա՛մ» – Մեծացուցեքների այս շարքը ևս, Սարգիս Երեցի վկայությամբ, «Սուրբ վարդապետին Վարդանա է ասացեալ»⁷⁰: Ծարքը բաղկացած է չորս Մեծացուցեքներից, որոնց տների սկզբնատառերով հոդվում է **Հէթում Տիրացո**: Ըստ Ս. Ամատունու, «Այս տիրացու Հէթումը թերևս է Կոստանդին իշխանի որդի Հէթում Ա, որ ի իր թագաւորութեան վերջին օրերում հրաժարուելով «Յամենայն զբաղանաց աշխարհի», եղաւ կրօնատր եւ կոչուեց **Մակար** (Չամչ. Գ. ԼԴ. 269), եւ թագաւորիս ճգնութեան, խստակրօնութեան ակամատես եղաւ շարականիս հեղինակ «հանճարեղ վարդապետն Վարդան» Պատմ. Կիրակոսի. Մոսկուա. 1858. Եր, 174»⁷¹:

⁶⁷ Վ. Ներսիսյան, «Ծարակնոցի» Թարգմանչաց կանոնը, «Էջմիածին», 2006, Ժ-ԺԱ, էջ 87:

⁶⁸ Գ. Անետիքեան, Նշվ. աշխ., էջ 548:

⁶⁹ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 10:

⁷⁰ Նույն տեղում, էջ 15:

⁷¹ Նույն տեղում, էջ 15-16:

Ս. Ամատունին հրապարակել է նաև Տիրոջ Հարության Մեծացուցեցների այլ պարականոն նմուշներ, որոնց մի մասը ևս, հավանաբար, Վարդան Վարդապետն է հեղինակել: Դրա համար, սակայն, բավարար հիմքեր չունենք:

«**Հգօր Արքային զօրեղ Զինակի՛ր**» – Սուրբ Սարգսին նվիրված մեկ այլ Օրհնություն է, որը, Սարգիս Երեցի վկայությամբ, «Վարդանա է ասացեալ»⁷²:

Մեծացուցեցներ՝ հավելված Սահակ Պարթևի հեղինակած Ավագ Ծաբաթվա կարգերում:

«Եղեմ բանաւոր ի վտակաց».

«Երկինք յերկրի Մարիա՛մ»

«Լոյսն արարչական ի չորրորդ ատուր»

«Մարիամ Լուսոյ Աստուածածի՛ն»

«Ո՛վ Տիրամայր, տրտմութեամբ տխրեալ»

«Աստուածածին ի շնորհէն»⁷³:

Սարգիս Երեցի վկայությամբ, Ավագ Ծաբաթվա այս մեծացուցեցները հեղինակել է Վարդան Վարդապետը⁷⁴: Նույն գրչի վկայությամբ, Վարդան Վարդապետը հեղինակել է նաև Համբարձման կանոնի երկու Մեծացուցեցները.

«Ուրախացի՛ր, Մարիա՛մ»

«Հարսն երկնից՝ յերկրէ ընտրեալ»⁷⁵:

Կանոնական Ծարակնցում առկա է Սանդուխտ կույսին նվիրված Մանկունքը (հեղինակ՝ Պետրոս Գետադարձ): Սարգիս Երեցի վկայությամբ, Վարդան Արևելցին ստեղծել է այդ Սրբուհուն նվիրված կանոնը՝ Օրհնությունը և Հարցնը՝ իր կազմով⁷⁶:

Սարգիս Երեցի գրչագրած Ծարակնցում Խաչվերացի ութերորդ օրվա կանոնում ընդգրկված է սուրբ Գեղարդին նվիրված «**Իսկ դու, պարծա՛նքդ պարծանաց**» Մանկունքը, որը գրչի

⁷² Նույն տեղում, էջ 57:

⁷³ Նույն տեղում, էջ 96–99: Ավագ Ծաբաթվա Մեծացուցեցներ է գրել նաև Ներսես Ծորհրախյան (տե՛ս նույն տեղում, էջ 93–96):

⁷⁴ Նույն տեղում, էջ 96: Անհիմն է այդ Մեծացուցեցների հեղինակ համարել Գրիգոր Անավարզեցուն:

⁷⁵ Նույն տեղում, էջ 104:

⁷⁶ Նույն տեղում, էջ 116–117:

վկայությամբ, «սուրբ վարդապետին Վարդանա է ասացեալ⁷⁷։

Սարգիս Երեցը Վարդան Վարդապետի հեղինակությունն է համարել նաև Վարագա Խաչի կանոնի «Թագաւորոյ մեր Քրիստոս Աստուա՛ծ» Օրհնութիւնը⁷⁸։

Ստեղծելով Մարիամ Աստվածածնի ծնողներին նվիրված կանոնը և հեղինակելով բազմաթիվ Մեծացուցեաներ՝ Վարդան Վարդապետը լավագույնս շարունակել է Ոսկեդարից սկիզբ առած հայ մարիամեբզությունը։ Այս թեմային օրհներգության մեջ լայնորեն անդրադարձել է Մովսես Քերթոզահայրը, որից հետո Տիրամորը շարականներ են ձոնել նաև Սահակղուխտը և Ներսես Ընդհալին։ Վարդան Վարդապետն ըստ ամենայնի օժտված լինելով բանաստեղծական ձիրքով՝ կարողացել է նորովի հնչեցնել Աստվածածնի գովերգը։

Ըստ ավանդության, Մարիամի մայր Աննան ամուլ է եղել և միայն Տիրոջը լալագին աղոթելուց հետո հղիացել է ու ծնել Մարիամին։ Ահա ասվածի բանաստեղծական վերապատումը.

*Ի յամուլ երկրէ այսօր բուսաւ մեզ բարեբեր Բոյսըն բարի՛
Ծուշան հովտաց, Ծաղիկըն դաշտաց՝
Միամայրըն Մարիամ՝ Արմատ Տընկոյն անմահութեան.
աղաչանօք Սորա խընայեա՛ ի մեզ։*

Ծաղկի, տունկի և պտղի փոխաբերությունները տարբեր այլաբանական պատկերներ են կազմել Վարդան Վարդապետի մարիամեբզական շարականներում, որոնց վրա ևս նկատելի է Նարեկացու ազդեցությունը։ Այսպես, դիմելով բանական Եղեմ և աստվածային Դրախտ Մարիամին, շարականագիրն ասել է.

*Եղե՛մ բանատր՝ ի վրտակաց Հոգւոյն Սրբոյն ստոգեալ
եւ գօրութեամբ Բարձրելոյն հովանատրեալ,
Ծառըն կենաց ի Քէն տընկեցաւ՝ անմահական Պրտողվըն
լըցեալ,
որ փոխանակ մահացու պրտողոյն՝ կենաց Կերակուր մեզ
պարգեւեցաւ։*

⁷⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 130–131։

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 131–132։

Կամ՝

Ի փշաբեր հովիտըս տըրտմութեան Գիւնի ուրախութեան արկեր...

Ահա և Համբարձման նմանօրինակ այլաբանական պատկերը.

քանզի Ոգկոյզն ի Քէն՝ Գիւնի, ել ի բարձունս բոտրային գունով...

Աստվածամայր Մարիամը բարության, արդարության, խաղաղության և հույսի մարմնավորումն է: Ծարականներից մեկում հեղինակը նրան համեմատել է անասելի խոնարհությամբ հանդարտ օդի հետ, ապա նաև կոչել է «հրաշագեղ Ծաղիկ յուսոյ», «Խարիսխ յուսոյ հաստատութեան», «Վերնական բարեաց բաշխման Գործակից եւ Բաժանորդ», «Արդարութեան Պսակ մարդկան»:

Մարիամը միաժամանակ մարդկային է և աստվածային, երկինք է և երկիր, աննյութական հողեղեն Սերովբե: Նա ոչ միայն հոգևոր Տաճար է, այլև այդ Տաճարի խորանի Զարդ, «ոսկի Սեղան յօրինեալ», «խորհրդաւոր Խորան Բանին Հօր Բարձրելոյ», «Թագազարդ Պսակ փառաց», «Աստուածագործ Տախտակ»,

որ ի Հոգւոյն Սըրբոյ կազմեալ՝ Գրծող աստուածեղէն տառիւրն...

Վարդան Վարդապետը ևս Մարիամին, որի անունն իսկ «լուսաւորեալ» է նշանակում, և որը Լույս-Աստծո կրողն էր, պատկերել է իբրև լուսեղեն էակի՝ մարիամերգությունը զուգորդելով լուսերգությամբ: Ծարականագիրը Տիրամորը կոչում է «լուսապայծառ», «Լոյս աշխարհի», «պայծառ Երկինք», «Արեւելք իմանալի», «Ընդունարան եօթնարփեան շնորհաց», «Ծափիղեալ փայլեալ»,

Առաւօտ խաղաղութեան եւ Արուսեակ զուարթարար...

*Փայլածո՛ւ պայծառ, Փայլա՛կն ի բարձանց երեւեալ թեւօք
Հոգւոյն...*

Ծարականներից մեկում բանաստեղծը քանդակել է լուսեղեն Հարս-Մարիամի մի այսպիսի գեղեցիկ պատկեր.

*ի Լիբանանէ դիմեալ Հարսըն զգեցեալ այսօր՝
զարեգակն արկեալ ըզՔեւ եւ ընդ ոտիք՝ ըզլուսին
ստունըստեալ...*

Ակամա հիշում ես Գրիգոր Նարեկացու՝ փայլակնաձև աչքերով Աստվածածնին, որի «ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթիլ առնոյր»:

Վարդան Վարդապետ Արևելցին, Քերթողահայր Խորենացուց և Գրիգոր Նարեկացուց հետո, Տիրամոր լավագույն գովերգուն է հայ քերթության մեջ:

Ուշագրավ է, որ Աստվածածնին նվիրված շարականներից մեկում Վարդան Վարդապետը Տիրամոր ծննդյան «Ղորհաբաշխ» օրը երկնային Թագավորից հայցում է Հայոց պետության և Եկեղեցու բարօրությունը.

*նորոգեա՛ զկենդանութիւն մերոյ թագաւորին...
Ղորհագարդ պայծասացո՛ զգաւազան իշխանութեան
մերոյ հայրապետին...
ընցո՛ ըզպէտըս կարեաց Հայաստանեայց Եկեղեցոյ:*

Այսպիսով, անգամ մարիամերգության մեջ ազգային անխոնջ ու նվիրյալ գործիչն ու մատենագիրը արտահայտել է իր հայրենասիրական իղձերը, որոնք զեղված են նաև նրա բազում այլ շարականներում:

Եթե Աստվածածինը համայն քրիստոնեական աշխարհի Մայրն է, ապա հայոց արքայադուստր սուրբ վկայուհի Սանդուխտը, Վարդան Վարդապետի բնորոշմամբ, հանդիսանում է «Հայաստանեայց մայր հաւատոյ»: Սրբուհու անունից մակաբերելով՝ շարականագիրը նրան կոչել է «սանդուղք էլից լերկրէ լերկինս», «սանդուղք հոգուց Հայաստանեայցս» և մեծարել է իբրև հոգեհարազատ ազգային սրբուհու՝ այս անգամ էլ դիմելով ծաղկի փոխաբերությամբ.

*Ծիրանածին ծաղի՛կ երկրի,
թա՛գ Թորգոմեան թագաւորաց...*

*Ի հովիտըս տըրտմութեան բուսեալ
շուշան Ղորհաց Սուրբըն Սանդուխտ:*

Սրբուհի Սանդուխտը քրիստոնեություն է ընդունել Թադեոս առաքյալի միջոցով: Ելնելով սրանից՝ շարականագիրն այս առաքյալին համարել է Քրիստոս-Փեսային հարսնացած Սանդուխտ կույսի փեսայաբերը (փեսաւէր):

*Օրիորդ Հայոց Մեծաց,
հա՛րսն երկնատր անմահ Բանին,
գոր փեսաւէրն հրաւիրեաց՝
Սուրբ առաքեալըն Թադէոս...*

Վարդան Վարդապետը Հայաստանի լուսավորիչ Թադեոս առաքյալին (Բարդուղիմեոս առաքյալի հետ) հիշատակել է նաև տասներկու առաքյալներին ձոնված Օրհնութեան մեջ.

*Հայրատունկ այգւոյն հրրեղէն պարի՛սպ եւ բարձր
աշտարա՛կք,
ոսկեղէն բաժա՛կք եւ ժիր մատրոռու՛կք,
Հայաստանեայց հայր հոգեւոր Բարդուղիմէ՛ո՛ս եւ Թադէո՛ս,
բարեխօ՛ս լերոռք առ Տէր վասն անձանց մերոց:*

Ինչպես այս, այնպես էլ մյուս բոլոր առաքյալներին (նաև 13-րդ առաքյալ համարվող Պողոսին) շարականագիրը ներբողել է նման ինքնատիպ մակդիրներով ու փոխաբերություններով՝ հանդես գալով նաև իբրև առաքելոց փայլուն գովերգու:

Վարդան Վարդապետը Թադեոս առաքյալին հիշատակում է նաև Սուրբ Գեղարդին ձոնված իր նույնքան գեղեցկահիշու շարականում: Ըստ ավանդության, Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան է բերել Հիսուսի կողք խոցած և քրիստոնյաների համար սրբազան մասունք դարձած Գեղարդը: Գովերգելով «պարծանք պարծանաց» և «բանալի անճատ շնորհաց» Գեղարդը՝ շարականագիրն ասել է.

*Գեղեցիկ գո՛յն գովելի՛
ներկեալ արեամբն Քրիստոսի,
ի փառս ազգիս Հայաստանեայց
արձանացար յերկրի մերում,
աշտարա՛կ բարձր եւ ամուր,*

*պարի՛սպ հրեղէն շուրջանակի,
քեւ քգՔրիստոս բարեքանեմք,
հի՛մըն բարեաց Եկեղեցւոյ:*

Վարդան Արևելցի «հայկական թեման» շոշափել է նաև ազգայնացված սուրբ Սարգիս Զորավարին ձոնած իր Օրհնութիւններում: Ըստ ավանդության, Սարգիս Զորավարը, աստվածային հայտնությամբ, որդու՝ Մարտիրոսի հետ միառժամանակ ապաստանել է Հայաստանում: Ուստի շարականագիրը նրան կոչել է «Աւետարոք Հայոց Մեծաց» (Մեծ Հայքի ավետարեք) և շոպլորեն ներբողել է նրան՝ համարելով «հողմն հարաւոյ ի դաշտ ծաղկածին», «տունկ անմահութեան»,

*Ցաւալից կենաց մարդկան զօրեղ բըժի՛շկ՝ սըրբիչ
արտասուաց,
նեղելոց դիրիչ, վըշտաց մըխիթար...*

*Գեղեցիկ անո՛ն, բարի, քաղցր եւ անուշ պըտո՛ւղ շըրթանց՝
հաւատացելոց՝
ի գիշերի եւ ի տուընջեան յուսով կոչեցեալ,
ընդ ամենայն տեղիս յիշեալ եւ փառաւորեալ...*

Սուրբ Սարգսին բանաստեղծը դիմել է նաև որպես զօրեղ զորավարի, որին համարել է «մեր իշխան» և, Ներսես Ծնորհալու ազդեցությամբ, զովերգել, ինչպես Վարդանանց նահատակ զորականներին.

*յաղթող սպառազէ՛ն եւ քաջ նահատա՛կ...
Թագաւորին երկնատրի սուրբ զօրապե՛տ եւ մենամարտի՛կ՝...
Առաքելական զինու վառեալ՝ մըտեր ի մեծ հանդէս
քաջութեան...*

*Սաղաւարտ յուսոյ անմահ Բանին եղեալ ի գլուխ մերոյ
իշխանին,
սուսեր՝ աջոյ, վահան հաւատոյ՝ քրիստոսաւէր զօրաց եւ
զօրապետաց.
ատենահաս սուրբըր Սարգի՛ս, ամուր պարիսպ ընտիր հեծելոց,
բարեխօս՝ լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:*

Հիշելով այն իրողությունը, որ Մեսրոպ Մաշտոցը սուրբ Սարգսի աճյունը Պարսկաստանից տեղափոխել է Հայաստան և նշխարներից մեկը՝ խաչափայտի մեջ ամփոփված, կանգնեցրել է Գագա բլուրի գագաթին, Վարդան Վարդապետը, առիթը բաց չթողնելով, գովերգել է նաև սուրբ Մեսրոպին.

*Ո՛ր սուրբ վարդապետ ընտիր եւ արժան,
Մեսրո՛պ բազմաջան եւ Հայոց թարգմա՛ն,
որ զնըշանագիրըն քեւ յայտնեցան,
եւ պակասութիւն Հայոցրս լըցան,
ըստ այնմ օրինակի կանգնեցեր Նըշան
ի մէջ մացառաց եւ ի խուժաստան,
բարձր ի դիտակի Գագա գագաթան,
որով պահպանի քառանկիւն սահման,
եւ փայլէ լուսով մեծ Արեգական...*

Ասացինք, որ հայրենասեր շարականագիրը երկու Օրհնութիւններով օրհներգել է սուրբ թարգմանիչներին⁷⁹: Նա հատկապես կարևորել է հայոց աստվածատուր նշանագրերը հայտնաբերած Մեսրոպ Մաշտոցի դերը.

*Որ խորհրդդեամբ նըշմարիտ Լուսոյ փառաց Անեղին
նըկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր
մեծին Մեսրոպայ.
անմատոյց Լուսոյն երկըրպագեցուք:*

Բարձր է գնահատել նաև Սահակ Պարթևի դերը, որի գլխավորությամբ սուրբ թարգմանիչները պայծառորեն զարդարեցին Հայաստանի եկեղեցիները.

*Որք նորափետուր բանիւ զարդարեալ՝
պայծառազգեցան եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռքն
սըրբոյն Սահակայ,
եղգով քաղցրութեան հընչմամբ զԱստուած օրհնեցուք...*

⁷⁹ Վարդան Արևելցին հեղինակել է նաև «Բան գովեստի պատմագրաբար վասն Սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ եւ այլոց թարգմանչացն» մեծարժեք ներբողյանը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», հտ. 7, Երևան, 1964, էջ 377–397):

Այնուհետև նկատի ունենալով թարգմանչաց երկու պարագլուխների՝ ասել է.

*Որ երկոքումբք սուրբ լուսաւորչօք տանըս Թորգոմայ
հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց՝ ըզլոյս
իմաստից ի մեզ ծագելով.
մաղթանօք սոցա, Քրիստո՛ս, խընայեա՛ ի մեզ:*

Վարդան Արևելցին թարգմանչաց նվիրված շարականներում ևս «հնչեցրեց ազգային մշակույթի մեծարման ու հայրենասիրական եղանակներ»⁸⁰:

Խոշոր շարականագիր է նաև նշանավոր բանաստեղծ, գիտնական և իմաստասեր **Հովհաննես Պլուզ Երզնկացին** (մոտ 1225–1293): Նա աշակերտել է Վարդան Արևելցուն և համագործակցել է Հակոբ Կլայեցի կաթողիկոսի հետ: Վերջինիս խնդրանքով քերականություն և աստվածաբանություն է դասավանդել Հոռոմկլայի կաթողիկոսարանում⁸¹: Ինչպես ենթադրեցինք, իր ուսուցչի՝ Վարդան Վարդապետի (գուցե նաև Հակոբ կաթողիկոսի) առաջարկով է հորինել իր շարականները: Պահպանված շարականների մի մասը կանոնական է, զգալի մասը պարականոն է դարձել⁸²:

Երզնկացին հեղինակել է սուրբ Սարգսին և նրա որդի Մարտիրոսին նվիրված մի կանոն, որի համար, ինչպես տեսանք, երկու Օրհնութիւն է գրել Վարդան Վարդապետը: Ամբողջ կանոնն անվավեր է դարձել⁸³: Կանոնական Ծարակնոցում մնացել է միայն Վարդան Վարդապետի Օրհնութիւններից մեկը, ինչպես նաև՝ ավելի վաղ Ծնորհալու գրած Մանկունքը:

Սուրբ Սարգսի կանոնի համար Երզնկացու հորինած Օրհ-

⁸⁰ **Գ. Հակոբյան**, Ծարականների ժանրը, էջ 269:

⁸¹ Նրա մասին մանրամասն տե՛ս **Ա. Երզնկացի-Սրբայան**, Հովհաննես Երզնկացի Պլուզ, Կյանքը և գործը, Երևան, 1993:

⁸² Տե՛ս **Հ. Անասյան**, Նշվ. աշխ., էջ LXVII, LXIX–LXX, LXXII, **Ս. Ամատունի**, Նշվ. աշխ., Անվանացանկը:

⁸³ Տե՛ս **Ս. Ամատունի**, Նշվ. աշխ., էջ 51–56:

նութեան տների սկզբնատառերով հողվում է **Յոզանէսի**, իսկ հաջորդ շարականների տների սկզբնատառերով՝ **Յոհաննիսի առ Սուրբն Սարգիս**:

Ներսես Ծնորհալու հեղինակած «Սրբոյն Գրիգորի Լուսավորչին մտանելոյն ի Վիրապ» կանոնի համար Երզնկացիս գրել է մի այբբենաշար Օրհնութիւն և մի Ծաշու, որոնք առկա են կանոնական Ծարակնոցում: Բացի այդ, նա Լուսավորչին ձոնել է նաև պարականոն դարձած երկու Օրհնութիւն, մեկ Համբարձի և մեկ Ծաշու⁸⁴: Ըստ մեզ, այդ շարականները գրվել են Լուսավորչի ճշխարների գլուտի կանոնի համար...

Երզնկացիս հեղինակել է Սուրբ Ներսես Մեծ կաթողիկոսին նվիրված կանոն, որ առկա է վավերական Ծարակնոցում:

Սուրբ Հակոբ Մծբնացի Հայրապետի կանոնը որոշ աղբյուրներ վերագրում են Ներսես Ծնորհալուն, այլ աղբյուրներ՝ Հովհաննես Երզնկացուն⁸⁵: Մեզ համար ընդունելի է, որ կանոնի հեղինակը Ծնորհալին է, իսկ Երզնկացիս գրել է կանոնի անվավեր դարձած երկու Օրհնութիւնները, որոնք հողում են **Յակոբ** անունը⁸⁶:

Վերջապես Հովհաննես Երզնկացուն են վերագրվում Նիկողայոս Հայրապետին, ինչպես նաև Յոթ խոտաճարակներին նվիրված Մանկունքները, որոնք առկա են կանոնական Ծարակնոցում:

Կատարելով իր ուսուցչի՝ Վարդան Վարդապետի հանձնարարությունը և հետևելով նրան՝ Երզնկացիս մի ամբողջ կանոն կազմող շարականներով փառաբանել է սուրբ Սարգիսին: Հայցելով այս զորավոր սրբի բարեխոսությունը Տիրոջ առջև՝ շարականագիրը նրան մեծարել է ավանդական, երբեմն նաև ինքնահնար մակդիրներով ու փոխաբերություններով. «Յեղեմական տնկոյն շառաիդ բարի», «ապաւէն յուսոյ, կենաց փրկութեան առիթ», «պատկեր Տիրակիր, պատարագ անուշահոտ, ընծայ բանաւոր»,

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 78–80:

⁸⁵ Տե՛ս Գ. Աւետիքեան, Նշվ. աշխ., էջ 553, Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 139:

⁸⁶ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 140–141:

*Անմահ Արքային տաճա՛ր՝ մաքրափայլ արեգակնակերպ
ճառագայթիք,
դամբա՛ր հոգւոց բանաւորաց, մե՛ծըդ ի զինաւորս...*

Այս մեծագույն զինվորը զորավոր է, քանի որ զինվորագրվել է Աստվածային Բանի տենչանքով և դարձել է անգամ «համախմբող զօրաց հրեղինաց»: Այս մեծ զինվորը նաև մեծ նահատակ է, որի համար «Ի սուրբ տաճար հոգևոր՝ յԵկեղեցիս բանաւոր... Տէր կանգնեաց մահարձան»: Մեր շարականագիրն ինքը իր ստեղծած կանոնով (Վարդան Վարդապետի Օրհնութիւններով հանդերձ) կերտել է սուրբ Սարգսի հոգևոր հուշարձանը: Ընդ որում, այդ հուշարձանը նվիրված է նաև Սարգիս Զորավարի մանկահասակ որդուն՝ Մարտիրոսին, որն իր «վարդագույն արեամբ պսակեալ փառօք»: Այս դեռահասակ նահատակին բանաստեղծը համարել է «ոսկեհոտ պսակ», «ջահրնկալ դեռաբոյս ծաղիկ»,

*Նարդո՛ւս անուշահոտ, ծաղի՛կ վարդագեղ, ողկո՛յգ
վաղախաս, քորվա՛ն ոսկեղէն՝ լըցեալ խընկօք, Մարտիրո՛ս վրկայ...*

Սարգիս և Մարտիրոս արբերին նվիրված շարականներն, ըստ երևույթին, Հովհաննես Պլուզի առաջին բանաստեղծական գործերից են: Սակայն դրանց մեջ արդեն ցոլարձակում է մեծ բանաստեղծի տաղանդը:

Առավել հասուն գրչի արդյունք են Գրիգոր Լուսավորչին նվիրված շարականները:

Անշուշտ, դյուրին չէր Մովսես Խորենացուց և Ներսես Ծնորհալուց հետո շարականներ ձոնել Հայոց մեծ Լուսավորչին: Սակայն դա, ըստ երևույթին, ժամանակի թելադրանքն էր, որ ի կատար է ածել ժամանակի խոշոր բանաստեղծը⁸⁷:

⁸⁷ Ա. Երզնկացի-Սրապյանը բերել է մի ավանդություն, որը պատմում է, թե ինչպե՞ս և ի՞նչ առիթով է Երզնկացին գրել Լուսավորչին ձոնված շարականները (Ա. Երզնկացի-Սրապյան, Հովհաննես Երզնկացի Պլուզ, էջ 145): Երզնկացին Գրիգոր Լուսավորչին ձոնել է նաև մի գեղեցիկ տաղ և մի ծավալուն ներբողյան (տե՛ս Հովհաննես Երզնկացի, Բանք չափավ, Երևան, 1986, էջ 115-116, 136-199):

Կոթողային ստեղծագործություն է Երզնկացու Օրհնությունը՝ ներմուծված Ներսես Ծնորհալու «Սրբուն Գրիգորի Լուսաորչին մտանելուն ի Վիրապ» կանոնի մեջ: Սա 36 քառատող տնե-րից բաղկացած այբբենաշար քերթված է, որ ներկայացնում է Լուսավորչի վկայաբանությունը՝ նրա կրած չարչարանքների ողջ մանրամասներով: Հարկ է եղել նոր սերնդին նորից ու նորովի պատմել ազգային մեծ արբի օրինակելի վարքը: Ծարականի պատումը համեմված է Լուսավորչի ներբողով: Օրհնեղ-վող սուրբը պատկերված է իբրև անմահ տունկ, որ տրվել է մեզ ծաղկած աստվածատունկ դրախտից: Նա Հայր Աստծո աջով մշակված ճշմարիտ Որթի (Քրիստոսի) ողկուզաբեր ոստ է (բա-րունակ),

*յորմէ բըղխեաց բաժակն ուրախարար տըրտմեցելոյ
ագինս,
որով արբեալ՝ ըզմայլեցաք յուրախութիւն հոգեւոր:*

Այնուհետև շարունակվում է ծաղկող բնության հոգևոր այլա-բանությունը.

*Գարնանաբեր հընչումն հարաւային հողմոյն
ճառագայթեալ հըրով աստուածային Հոգւոյն,
որով հալեցաւ սատըն կոսապաշտութեան հիւսիսաբնակ
ագանց,
եւ եղեն ծաղկեալք աստուածային գիտութեամբըն:*

*Դրախտ նորագուարճ տընկեալ յաշխարհիս Հայոց
բազմաջան քըրտամբք տէր Գրիգորիոս,
արբեալ ի վըտակաց հոսման քարոզի ճըշմարիտ Բանին՝
ծաղկաւէտ լըցեալ հրաշագեղ տընկօք:*

Ինքնաստիպ են ծաղկի ու ծառի հետևյալ փոխաբերություն-ները.

*Ի փշաբեր արմատոյ վա՛րդ կարմրերփեալ ծաղկեալ,
անուշահոտ բուրմամբ լըցեր զՀայաստան աշխարհս՝
յայտնելով ի մեզ ըզհոտ գիտութեան:*

*Լուսապայծառ ծաղիկ ի յերկրի ցուցար,
քաղցրաճաշակ արմաւենի՝ ի տանն Աստուծոյ տընկեալ՝
պարարտացեալ պըտողով՝ հաւատոյ մանկամբբ:*

Ինչպէս երևում է նաև բերված հատվածներից, շարականագիրը շարունակ շեշտում է Լուսավորչի լուսավորչական դերը Հայաստանի և հայ ժողովրդի համար: Նշանակալից է այդ դերը նաև Արշակունյաց պետության համար.

*Թագ պարծանաց Արշակունեաց կազմեալ
ստաքելական վարուք, տէր Գրիգորիո՛ւ,
յօրինեցար բազմագոյն ակամբք հանդիսից
նահատակութեան՝
վայելուչ պըսակ հիւսեալ սուրբ Եկեղեցոյ:*

Շարականագիրն ինքը, իր հերթին, իր այս և համանման երգերով հոգեղեն պսակ է հյուսել հանուն հավատքի և ժողովրդի՝ անասելի տառապանքներ կրած սուրբ Գրիգորի համար.

*Յեռեալ ընդ ոսկոյ ակամբք պատուական
մարգարտաշար
հիւսեմք գշարչարանաց քոց թիւ, տէր Գրիգորիո՛ւ...*

Ասացինք, որ Լուսավորչին ձոնված կանոնում Երզնկացիններն ուծել է նաև մի ժաշու («Լերինք ամենայն»): Այն ընդօրինակված է որոշ ձեռագրերում «Ի Սեպուհ լեառն» խորագրով: Ահա առաջին տունը.

*Լերի՛նք ամենայն, այսօր ցընծացէ՛ք
ընդ մեծապայծառ փառսըն Սեպուհոյ գերագանց լերինըն,
քանզի ի նըմա բնակեցաւ սուրբըն Գրիգորիոս՝
սիւն լուսոյ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ,
որով ցընծայ ի փառքս Վերնոյն Սիօնի:*

Այստեղ, ինչպէս գրում է Ա. Երզնկացի-Սրապյանը, «բանաստեղծը կարծես կոչ է անում մի վսեմ խրախճանքի, որի մասնակիցները պատմության մեջ մեծ փառքի ու պատվի արժանացած լեռներն են: Շարականը... գովք է Երզնկայի գեղատեսիլ

բնության ու Սեպուրի լեռան, որ իր մեծապայծառ փառքով գերազանց է մյուսներից, որովհետև ինքն է եղել Լուսավորչի կյանքի վերջին տարիների հանգրվանն ու հանգստարանը»⁸⁸:

Հատկանշական է, որ շարականագիրը Սեպուրի լեռն ավելի վաճեմ է համարում, քան «գԱրարատեանըն բարձրը Մասիս», քանի որ սուրբ Գրիգորն այդ լեռան վրա հանգրվանեց որպես նոր տապան՝ ի փրկություն Հայոց ազգի:

Գրիգոր Լուսավորչին նվիրված այս և մյուս շարականներում Երզնկացին բազմաթիվ ու բազմապիսի մակդիրներով, փոխաբերություններով ու համեմատություններով պատկերել է սրբի միաժամանակ մարդկային ու գերմարդկային կերպարը: Եվ այն ամբողջովին համակված է լույսով, քանի որ Լուսավորիչն ինքը լույսի աղբյուր է, «կամար ամպեղէն», «շառաւիղ լուսազարդ՝ ճանապարհին կենաց»: Եվ այդ լույսը առավել իմաստալից ու մեծարժեք է, քանի որ ջահի մման վառվել է իր հայրենիքի համար («Լոյս ջահացուցեր Հայաստան ազգի») և դարձել «սին լուսոյ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ»:

Հայոց մեծ հոգևոր Հովվին նվիրված շարականներից մեկում կան այսպիսի տողեր.

*Հովուին հըսկողի ճըշմարիտ եւ քաջ՝
Հովուին պատկերի հովիւքըն եղեն հետեւողք...*

Մեծ Հովվին լավագույնս հետևել է նրա ծողը՝ Ներսես Մեծ Պարթևը, որին, ինչպես ասացինք, շարականների կանոն է նվիրել Հովհաննես Երզնկացին: Ծարականագիրը, բնականաբար, շեշտել է Ներսես Մեծի սրբազան ժառանգականությունը, համարել նրան «շառաւիղ անմահ տընկոյն, պըտող լուսոյ սուրբ Լուսաւորչին»: Ներսեսն իր մեծ պապի մման, «արի եւ քաջ հովուապետ» է, «Հայաստանեայց լուսաւորիչ», «սին Հայաստանեայց»: Կանոնի ՏԷր լերկնիցում կարդում ենք.

*Այսօր զուարճացեալ՝ տօնեն երկնայինքն ընդ մարդկան
պարակից եղեալ փըրկութեան մերոյ,
քանզի յայտնեցաւ մեզ հոգեւոր զանձըն լուսոյ՝
արեւելեան արեգական ճառագայթ սուրբըն Ներսէս:*

⁸⁸ Ա. Երզնկացի-Սրապյան, Հովհաննես Երզնկացի Պյուզ, էջ 145:

Ինչպես Վարդան Վարդապետը, որ Աստվածածնի ծննդյան օրը երկնային Թագավորից հաչցում էր Հայոց պետության և Եկեղեցու բարօրությունը, այնպես էլ նրա աշակերտ Հովհաննես Պլուզը Ներսես Պարթևի նշխարների հայտնության տոնախմբման օրը Քրիստոսին աղերսում է.

*Բարեխօսությեամբ սորա, Տէ՛ր,
պարգևեա՛ գիտադադութիւն Հայաստանեայց աշխարհի...*

*Բարեխօսությեամբ սորա, Տէ՛ր,
հաստատեա՛ զիշխանութիւն հայրապետական աթոռոյ...*

*Բարեխօսությեամբ սորա, Տէ՛ր,
բարձրացո՛ զիշխանութիւն թագաւորական աթոռոյ...*

Ինչպես Գրիգոր Լուսավորչին, այնպես էլ Ներսես Մեծ Պարթևին Երզնկացին ձոնել է նաև մի հրաշալի ներբողյան⁸⁹: Թե՛ Լուսավորչին և թե՛ Ներսես Մեծին նվիրված շարականներն ու ներբողյանները «մուսլ, ներանձնական ու ներհայեցական մելամաղձությունից հեռու, միտքն արթնացնող, հոգեկան բարձր տրամադրություն հարուցող, ազգային արժանապատվության զգացումներ ներարկող, հայրենասիրության ոգին զորացնող, ինչպես նաև քնարական շնչով ու ջերմությամբ հորդող հայապահպան քերթվածներ են»⁹⁰:

Հիշարժան է նաև Երզնկացու Մանկունքը՝ ձոնված հայ Եկեղեցու տոնելի սրբեր Յոթ խոտաճարակների: Վերջիններս խոտաբուտ կյանքով ապրող հայ ճգնավորներ էին, որոնք նահատակվել են 604 թվականին՝ Մշո Սուրբ Կարապետի վանքը պարսիկների հարձակումից պաշտպանելիս⁹¹: Ծարականը բաղկացած է 12 հանգավոր ութատող տներից, որոնց սկզբնատառերով հողվում է՝ **Յոհաննիսի է երգ**: Այս երկարաշունչ երգում գեղարվեստական կատարմամբ առանձնանում է հետևյալ տունը.

⁸⁹ Տե՛ս Հովհաննես Երզնկացի, Բանք չափավ, էջ 200–233:
⁹⁰ Ա. Երզնկացի-Սրապյան, Հովհաննես Երզնկացի Պլուզ, էջ 146–147:
⁹¹ Ծ. Արք. Գալուստեան, Հայագգի Սուրբեր, էջ 172–174:

*Եօթնաստեղեան երկնից կամա՛րք,
Աստուածութեանըն կամարա՛րք,
ճըզնողք մարմնով խոտաճարա՛կք,
մաքուրք հոգւովք լուսոյ տաճա՛րք,
Եկեղեցւոյ բարձր աշտարա՛կք,
տանըս Հայոց ամուր պատուա՛րք,
զձեզ աղաչեմք, ճըզնող սուրբ հա՛րք,
լինել անձանց մեր բարերարք:*

Ինչպես գրում է Ն. Թահմիզյանը, «Շարականագիր Երզնկացին մեր առջև հառնում է որպես հայրենամկեր բանաստեղծերաժիշտ, որի ներշնչման հիմնական աղբյուրը սեփական ժողովրդի պատմությունն է, հոգևոր մշակույթն ու այն կերտած լուսավոր դեմքերը: Ընդհանուր առմամբ՝ Երզնկացու շարականներին հատուկ են բանաստեղծական ապրումի անկեղծությունը, լեզվական բարձր մշակույթը, պատկերավոր ոճը»⁹²:

Տաղանդավոր տաղերգու Հովհաննես Պլուզ Երզնկացին և նրա երախտաշատ ուսուցիչ Վարդան Վարդապետ Արևելցին 13-րդ դարի շարականագրության խոշորագույն դեմքերն են: Նրանցից հետո սկսվել է շարականի մայրամուտը...

Բազմաթիվ շարականների հեղինակ է **Գրիգոր Անավարզեցին** (մոտ 1240–1307):

1293 թվականին ընտրվել է կաթողիկոս: Լինելով Կիլիկյան Հայաստանի լատինադավան խմբակցության պարագլուխ՝ կրել է **Հոռոմ** մականունը:

Թողել է մատենագրական ծավալուն ժառանգություն: Խմբագրել է Հայսմավուրքը և Շարակնոցը:

Անհրաժեշտ է նշել, որ Կիլիկիայի գրեթե բոլոր կաթողիկոսները ստիպված են եղել զբաղվել հայ և լատին եկեղեցիների միության խնդիրներով: Սակայն նրանք հիմնականում «նրբին դիվանագիտությամբ» խուսանավել են այդ միություննից, որ են-

⁹² Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին..., էջ 288:

թաղրում էր կաթոլիկ Եկեղեցու գերակայություն և հայ Եկեղեցու դավանաբանական և քաղաքական ինքնության վերացում: Որոշ կաթողիկոսներ, անշուշտ, վարել են ինչ-որ չափի լատինամետ քաղաքականություն, սակայն Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսն էր, որ թե՛ իր գործունեությամբ և թե՛ ստեղծագործությամբ ընդունել է Հռոմի պապի գերիշխանությունը և ծիսակարգային ու դավանաբանական զիջումներ կատարել կաթոլիկ Եկեղեցուն: Այստեղ արդեն միանգամայն ավելորդ է «նրբին դիվանագիտության» մասին խոսել, կարծելով, թե կաթողիկոսը ճարահատյալ զիջումներ է արել «յանուն ազգի բարօրութեան», «հայրենիքին շոշափելիօրէն օգտակար լինելու ձգտումով»⁹³: Ընդհակառակը, այդպիսով վտանգվել է թե՛ ազգի բարօրությունը և թե՛ հայրենիքի քաղաքական, եկեղեցական ու մշակութային ինքնությունը: Ի դեպ, Անավարզեցուց հետո գահակալած մի շարք կաթողիկոսներ (այդ թվում նաև նրա քեռորդի Հակոբ Բ Անավարզեցին), գտնվելով շատ ավելի դժվարին պայմաններում, անհաշտ պայքար են մղել Կիլիկիայում լայն գործունեություն ծավալած կաթոլիկ միսիաների դեմ: Ահա, մի կողմից՝ իսկապես դիվանագետ, մյուս կողմից՝ անզիջում հոգևոր առաջնորդներն էին, որ կարողացան արգելափոխ պայմաններում շուրջ երեք դար պահպանել ազգային պետականությունը:

Ժամանակի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը ցավով է արձանագրել, որ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսը «սկսա առ սակա-սակա զամենայն աւանդութիւնս Հոռոմոց եկեղեցւոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի. եւ ի մերոյս ի բաց քեցել մի մի»⁹⁴:

Անավարզեցին Հայսմավուրքը վերախմբագրել է «ոչ հայկական, այլ լատինադավան տոնակարգով»⁹⁵: Այդ տոնակարգի հիման վրա էլ հիմնովին վերանայել է նաև Ծարակոցը: Իսկ թե ինչ փոփոխություններ ու նորամուծություններ է կատարել նա այստեղ, ընդհանուր առմամբ երևում է նրա ստեղծած

⁹³ Գ. Մաղոյեան, Գրիգոր Անավարզեցին շարականագիր, էջ 73:

⁹⁴ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 448:

⁹⁵ Մ. Ավդալբեգյան, «Յասմաուրք» ժողովածուները, Երևան, 1982, էջ 79:

կանոնների այն ցուցակից, որ հրապարակել է Ղ. Ալիշանը՝ կատարելով որոշ ծանուցումներ ու մեջբերումներ⁹⁶: Այդ ցուցակի հերթականությամբ մշեմք Անավարզեցու հեղինակած (կամ նրան վերագրված) կանոնները՝ մեր որոշ ծանուցումներով:

1. **Կանոն անարատ յղութեան Սուրբ Աստուածածնի** – Մասնակիորեն հրապարակված է՝ «Կանոն ամենամաքրոյ յղութեան երանուհւոյ Կուսին Մարիամայ» խորագրով⁹⁷: Ունի **Կոստանդին արքայ Հայոց Է^օ Գրի...** բանակապը, որը, ինչպես գրում է Գ. Մաղոյանը, «տարակուսանք է հարուցում: Ըստ երեւոյթին կանոնը շարունակութիւն է ունեցել, չէ^օ որ հեղինակի անունը (կասկածից վեր է, որ եզրակապի վերջում նրա անունն է) կիսատ է մնում: Նոյնի օգտին է խօսում կանոնի վեց երգից բաղկացած լիմելը»⁹⁸:

2. **Կանոն ընծայման Սուրբ Աստուածածնի** – Հրապարակված է՝ «Կանոն ընծայեցման Աստուածածնին, յորժամ տարան զնա ծնողքն ի տաճարն երից ամաց, որ կոչի Սրբութիւն սրբոց» խորագրով⁹⁹: Ունի **Գրիգորի է երգս** այս բանակապը:

3. **Կանոն ճրագալուցի Ծննդեան եւ Յայտնութեան Տեառն** – Հրապարակված է որոշ կրճատումներով՝ «Հրաշափառ Ծննդեան Տեառն ճրագալուցի երեկոյին» խորագրով¹⁰⁰: Ըստ Ղ. Ալիշանի, այս կանոնը Ծննդյան և Հայտնության կանոնների համար հանդիսացել է «իբրեւ նախերգան իմն կարգեալ եւ պատրաստութիւն ճրագալուցի աւուրն»¹⁰¹:

4. **Կանոն Առաջին աւուր Ծննդեան** – Մասնակիորեն հրապարակված է՝ «Կանովն առաջի աւուրն Ծննդեան» խորագրով¹⁰²: Ամբողջական կանոնն ունի **Փառք, որ սիրով խնդրեաց արքայն Կոստանդինանոս** բանակապը: «Այստեղ,– ինչպես գրում է

⁹⁶ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 242:

⁹⁷ Տե՛ս Գ. Մաղոյեան, Նշվ. աշխ., էջ 116–120:

⁹⁸ Նույն տեղում, էջ 47:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 120–127:

¹⁰⁰ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 242: Գ. Մաղոյեան, Նշվ. աշխ., էջ 87–89: Ղ. Ալիշանի ցուցակում «Ծննդեան» բառի փոխարեն սխալմամբ դրված է «Մկրտութեան»:

¹⁰¹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 242:

¹⁰² Տե՛ս Գ. Մաղոյեան, Նշվ. աշխ., էջ 103–104: Տե՛ս նաև «Մանանայ», 1994, հ. Ա:

Գ. Մաղոյանը,– 40 տնից բաղկացած մի շարքի հետ գործ ունենք, որից ընթեռնելի են «խնդրեա» տառերով սկսուող տնե-րը¹⁰³;

5. Կանոն Բ ատուր Ծննդեան – Հրապարակված չէ: Հայտնի է միայն բանակապը՝ Կոստանդին արքայն խնդրեաց¹⁰⁴:

6. Կանոն Գ ատուր Ծննդեան – Մասնակիորեն հրապարակ-ված է¹⁰⁵: Ամբողջական կանոնն ունի Կոստանդիանոս արքայն խնդրեաց ի Գրիգորէ բանակապը:

7. Կանոն ճրագալուցի Մկրտութեան – Հրապարակված է՝ «Կանովն ճրագալուցին Մկրտութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» խորագրով¹⁰⁶: Ունի Մկրտութեանն Քրիստոսի բան վ'երգս բանակապը:

8. Կանոն Ա ատուր Յայտնութեան – Հրապարակված չէ:

9. Կանոն Բ ատուր Յայտնութեան – Հրապարակված չէ:

10. Կանոն Գ ատուր Յայտնութեան – Հրապարակված չէ:

11. Կանոն թլփատութեան Յիսուսի – Հրապարակված է՝ «Կանովն տնօրէնութեան եւ անուանադրութեան Տեանն» և «Կա-նովն ութօրեայ թլփատութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ» խորագրով¹⁰⁷: Ունի Կոստանդիանոս արքայն խնդրեաց զբանս բանակապը:

12. Կանոն Ամենասուրբ Երրորդութեան – Հոգեգալստյան ութերորդ օրվա կանոնն է: Սարգիս Երեցի վկայությամբ, «ՉՀո-գւոյն Սրբոյ գալստեան ութերորդ ատուրն... տեր Գրիգոր կաթո-ղիկոսն Անաւարզեցին ասաց»¹⁰⁸: Տպագրվել է երեք անգամ¹⁰⁹: Վերջինը խորագրված է «Կանօն Ամենասրբոյ Երրորդութեան, որ տօնի լուծներորդում ատուր գալստեան Ոգւոյն Սրբոյ»: Ունի Յոհաննես, որ եր արքայն, խնդրեաց բանակապը:

¹⁰³ Նույն տեղում, էջ 47:

¹⁰⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 47: Տե՛ս նաև «Մանանայ», 1994, հ. Ա:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 112–115: Տե՛ս նաև «Մանանայ», 1994, հ. Ա:

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 98–103: Տե՛ս նաև «Հայկազեան Հա-յագիտական Հանդես», հ. 18, 1998:

¹⁰⁷ Տե՛ս «Բագմավէպ», 1894, Յունուար: Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 4–7: Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 105–112 (մեկ շարական ավելի):

¹⁰⁸ Հ. Անաւայան, Նշվ. աշխ., էջ LXVI:

¹⁰⁹ Տե՛ս «Բագմավէպ», 1895, Յունիս: Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 108–111: Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 140–145:

13. **Կանոն Աւագ Երկուշաբաթի** – Հրապարակված չէ:

14. **Կանոն Աւագ Երեքշաբաթի** – Հրապարակված չէ:

15. **Կանոն Աւագ Չորեքշաբաթի** – Հրապարակված չէ: Այստեղ անհրաժեշտ է ասել հետևյալը: Սարգիս Երեցի գրչագրած Ծարակնոցից հրապարակելով Ավագ Ծաբաթվա անվավեր դարձած Մեծացուցեցները՝ Ս. Ամատունին տեղեկացրել է, որ գրչի վկայությամբ, «Ձաւագ շաբաթին մեծացուցեքն վարդանայ է ասացեալ»: Այնուհետև նշելով, որ Ալիշանի կազմած ցուցակի համաձայն, Անավարզեցին հեղինակել է Ավագ Ծաբաթվա առաջին երեք օրերի կանոնները, գրել է. «բայց թէ կա՞ն նրանց մէջ մեր յառաջ բերած Մեծացուցեքը, գրուածքից յայտնի չէ: Մեծացուցեքս աւելի մնան են Անաւարզեցու գրածներին, քան վարդանի»¹¹⁰: Ամատունու այս կարծիքը, որ չունի ոչ մի լուրջ հիմք, բավական է եղել, որպեսզի Գ. Մաղոյանը Ավագ Ծաբաթվա նշված օրերի պարականոն Մեծացուցեցները համարի Անավարզեցու ստեղծագործությունը¹¹¹: Մինչդեռ շատ ավելի վստահելի է Սարգիս Երեցի վկայությունը, թե այդ Մեծացուցեցները «վարդանայ է ասացեալ»: Խոսքը վարդան վարդապետ Արևելցու մասին է...

16. **Կանոն ամենայն Սրբոց** – Հրապարակված է¹¹²: Տների սկզբնատառերով հոդվում է հալոց այբուբենը:

17. **Կանոն ՀԲ Աշակերտաց Քրիստոսի** – Հրապարակված չէ:

18. **Կանոն Մատթէի աւետարանչի** – Հրապարակված չէ:

19. **Կանոն Մարկոսի աւետարանչի** – Հրապարակված չէ:

20. **Կանոն Ղուկասի աւետարանչի** – Հրապարակված չէ:

21. **Կանոն Անդրէի առաքելոյն** – Հրապարակված չէ:

22. **Կանոն Թումայի առաքելոյն** – Հրապարակված չէ: Հայտնի է Թովմաս առաքյալի մի անվավեր կանոն, որի մասին խոսք եղավ վերևում:

23. **Կանոն Սրբոյն Բարսղի** – Հրապարակված է երեք ան-

¹¹⁰ Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 96:

¹¹¹ Տե՛ս Գ. Մաղոյեան, Նշվ. աշխ., էջ 89-92:

¹¹² Տե՛ս «Բագմատէպ», 1894, Նոյեմբեր, Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 145-149: Գ. Մաղոյեան, Նշվ. աշխ., էջ 13-140:

գամ¹¹³: Վերջինը խորագրված է՝ «Կանոն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու»: Ունի **Արքա Հեթիւմ** բանակապր: Կանոնական Ծարակնոցում առկա են այս և հաջորդ Հայրապետին (Գրիգոր Աստվածաբանին) նվիրված Մանկունքներ, որոնք հեղինակել է Ներսես Ծնորհալին:

24. Կանոն Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի – Հրապարակված չէ:

25. Կանոն Սրբոյն Լէոնի Պապի – Հրապարակված է՝ «Սրբոյն Լէօնի Մեծի քահանայապետին Հոսմէականի շարականաք պատմաբանականք, որ յամի Տեառն ՆԿԲ յապր. ԺԱ հանգեալ ի Քրիստոս» խորագրով¹¹⁴: Ունի **Սրբոյն Լէօնի Մեծի քահանայապետին Հոսմայ երգ** բանակապր:

26. Կանոն Է ժողովոց – Այս կանոնի կապակցությամբ պետք է ասել հետևյալը. Սարգիս Երեցի վկայությամբ, Գրիգոր Անավարզեցին հեղինակել է «Հիման յառաքեալսն» Մանկունքը¹¹⁵, որը նվիրված է Նիկիայի երկրորդ տիեզերական ժողովին: Պարականոն դարձած այս շարականը հրապարակել է Ս. Ամատունին¹¹⁶: Ունի **Հէթմո ի Գրիգորէ** բանակապր: Գ. Մաղոյանը գտել է նաև կանոնում առկա մեկ այլ բանակապ՝ **Հեթում Նիկիէ Բ** և հիշատակելով Ալիշանի բերած «Կանոն Է ժողովոց» խորագիրը՝ գրել է. «Անչայտ է. կանոնը նուիրած է եղել եօթ տիեզերական ժողովների¹¹⁷», թե՞ միայն եօթերորդին: Անորոշ է նաև, թե «Հիման յառաքեալսն» շարականը մի մա¹¹⁸սն է վերոյիշեալ կանոնի, թե՞ առանձին երգ է: Այս հարցերը միմիայն նոր քննարկների յայտնաբերումով կպարզւեն թերեւս»¹¹⁷:

27. Կանոն Սրբոյն Նիկոլայոսի – Հրապարակված չէ: Կանոնական Ծարակնոցում առկա է Նիկոլայոս Հայրապետին նվիրված Մանկունք, որի հեղինակը, ինչպես տեսանք, Հովհաննես Պլուզ Երզնկացին է:

¹¹³ Տե՛ս «Բագմավէպ», 1894, Դեկտեմբեր: Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 153–156: Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 92–98:

¹¹⁴ Տե՛ս Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 165–173: Տե՛ս նաև «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, հ. 2, էջ 96:

¹¹⁵ Տե՛ս Հ. Անաչան, Նշվ. աշխ., էջ LXVI:

¹¹⁶ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 152–153: Տե՛ս նաև Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 146–147:

¹¹⁷ Տե՛ս Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 57:

28. **Կանոն սրբոյն Գէորգեայ Զօրավարի** – ըստ Ալիշանի, այս կանոնն ունի **Գրիգորիսի առ Գէորգէոս վկայ բանակապը**¹¹⁸: Խոսքն, անշուշտ, սուրբ Գևորգի անվավեր դարձած հայտնի կանոնի մասին է, որի հեղինակն, ինչպես տեսանք, Գրիգոր Պահլավունին է: Ալիշանն, ինչ խոսք, տեղյակ չի եղել, որ այդ կանոնը գտնվել է նաև 1159 թվականին գրչագրված Ծարակնոցում, այլապես չէր կատարի այդ վերագրումը: Նույն գրչագրում տեղ գտած Թադեոս առաքյալի կանոնը ևս, ինչպես ասել ենք, Անավարզեցու ստեղծագործությունը չէ, այլ՝ անհայտ հեղինակի գործ: Ուստի միանգամայն անընդունելի են այդ կանոնները Անավարզեցուն վերագրելու փորձերը¹¹⁹:

29. **Կանոն Թէոդորոսի Ստրատելատի** – Հրապարակված չէ:

30. **Կանոն Թէոդորոսի Զօրավարի** – Հրապարակված չէ: Կանոնական Ծարակնոցում կա այս գորավարին նվիրված Մանկունք, որ հեղինակել է Ծնորհալին: Դա, ըստ երևույթին, ընդգրկված է եղել Թէոդորոս գորավարի ամբողջական կանոնում, որն անվավեր է դարձել (հեղինակը Ծնորհալին է): Ըստ Ամատունու, «ԺԳ դարում գրուած մի քանի ընտիր Ծարականներից... յայտնի երեւում է, որ գօրավարիս բովանդակ շարականները գրուել են ժԲ դարում եւ երգուել են եկեղեցում»¹²⁰ :

31. **Կանոն Մերկեոնի Զօրավարի** – Հրապարակված չէ:

32. **Կանոն Սրբոց Տարագոսեանց** – Պահպանվել են այս սրբերին ձոնված մի անվավեր կանոն և «Տենչալի տօնի սրբոցն» սկսվածքով պարականոն Մանկունքը¹²¹: Վերջինիս հեղինակը, ըստ Սարգիս Երեցի, Հակոբ Մեծքարեցին (Վլայեցին) է: Ինչ վերաբերում է կանոնին, ապա նրա հեղինակն անհայտ է. շատ հավանական է, որ դա Գրիգոր Անավարզեցին է:

33. **Կանոն Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի** – Ալիշանը իր կազմած ցուցակում հրապարակել է ընդամենը 12 տող՝ նշելով, որ կանոնը այբբենաշար է, «մերթ մեծատող, այսինքն հին չափով վեշտասանավանկ, եւ մերթ կիսակ ութվանկեան»¹²²: Ասենք

¹¹⁸ Տե՛ս Դ. Ալիշան, Սիսուան, էջ 242:

¹¹⁹ Տե՛ս Գ. Մադոյեան, Նշվ. աշխ., էջ 60–66:

¹²⁰ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 60:

¹²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 159–163:

¹²² Տե՛ս Դ. Ալիշան, Սիսուան, էջ 242:

նաև, որ կանոնական Շարակնոցում կա Հովհան Ոսկեբերանին նվիրված Մանկունք, որի հեղինակը Ներսես Շնորհալին է:

Ղ. Ալիշանի կազմած ցուցակն, անշուշտ, չի ներկայացնում Անավարզեցու շարականների ամբողջական պատկերը: Գ. Մադոյանը ձեռագիր աղբյուրից հրապարակել է մի ամբողջական կանոն, որ խորագրված է՝ «Շարականք ի տօնի ամենաարքայ մարմնոյ եւ արեան Քրիստոսի Տեսուն մերոյ»¹²³: Ըստ հրապարակողի, այս կանոնի «հեղինակի ինքնութեան վերաբերեալ տեղեկութիւն ենք ստանում վերնագրից առաջ գրուած հետեւեալ խօսքերից. «Նորին Գրիգորի ասացեալ...»: Հաշուի առնելով, որ ձեռագրում մինչեւ այս կանոնն էլ արտագրուած երգերը Անավարզեցունն են, բոլորովին զերծ ենք մնում կասկածներից»¹²⁴:

Նույն ձեռագրում առկա է նաև սուրբ Բենեդիկտոսին նվիրված կանոնը: Ա. Մադոյանի ենթադրությամբ, «ս. Բենեդիկտոսին նուիրուած կանոնը արգասիքն է կիլիկեան մշակութային կեանքի, իսկ հեղինակը Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսն է»¹²⁵:

Ինչպես գրում է Գ. Մադոյեանը, «Արտաքուստ Գրիգոր Անավարզեցու ծրագիրը նույնն է, ինչ Շնորհալունը, ստեղծել շարականներ՝ առանց երգերի մնացած տօների համար: Բայց ուրիշ էր հարցի էութիւնը. այս անգամ ստեղծագործութեան միջոց կաթողիկ եկեղեցու տօներն էին»¹²⁶:

Հիրավի, շարականագրության ասպարեզում Ներսես Շնորհալու և Գրիգոր Անավարզեցու գործունեությունը համանման է միայն արտաքուստ: Ըստ էության, եթե Շնորհալին նոր կանոնների և շարականների համալրումով և որոշ նախկին կանոնների վերակազմումով ըստ ամենայնի հարստացրել է Հայ Առաքելական Եկեղեցու տոնակարգի հիման վրա ստեղծված

¹²³ Տե՛ս Գ. Մադոյեան, Նշվ աշխ., էջ 128-132: Տե՛ս նաև «Հանդես Ամսօրեայ», 1999, էջ 437-440:

¹²⁴ Նույն տեղում, էջ 48-49:

¹²⁵ Ա. Մադոյեան, Ս. Բենեդիկտոսը հայ մատենագրութեան մէջ, «Գարուն», 1993, հ. 3, էջ 90: Տե՛ս նաև Գ. Մադոյեան, Նշվ. աշխ., էջ 40, 66-68, 159-165:

¹²⁶ Տե՛ս Գ. Մադոյեան, Նշվ. աշխ., էջ 48:

Ծարակնոցը, ապա Անավարզեցին ձգտել է Լատին Եկեղեցու դավանաբանության ու տոնակարգի հիման վրա կազմաքանդել այն: Այսպես, Հայ Առաքելական Եկեղեցին Քրիստոսի Ծնունդը և Աստվածահայտնությունը (Մկրտությունը) տոնում է միասնաբար, ինչը ունի հատուկ խորհուրդ: Այս տաղավար տոնի ճրագալուցի և ութ օրերի կանոնները դեռևս Ոսկեդարում ստեղծել է Քերթողահայր Խորենացին: Անավարզեցին, ինչպես երևում է վերը բերված ցուցակից, կազմալուծել է այդ կանոնները և ստեղծել նորերը՝ ըստ կաթոլիկ Եկեղեցու տոնացույցի: Այս կապակցությամբ Ալիշանը վկայել է, որ Անավարզեցին «արարեալ է եւ երիս երիս շարականս Ծննդեան եւ Յայտնութեան Տեսուն, յառանձին ատուրս զատուցեալ զսօսան՝ ըստ Լատինաց»¹²⁷:

Անավարզեցին կազմալուծել է նաև Ավագ Ծաբաթվա կանոնները (առնվազն առաջին երեք օրերի), որոնք հեղինակել է Սահակ Պարթևը: Նա գրել է Ավագ Երկուշաբթիի, Երեքշաբթիի և Չորեքշաբթիի նոր կանոններ: Մինչդեռ Ընորհալին Ավագ Ծաբաթվա կանոններում կատարել է ընդամենը շահեկան հավելումներ:

Անավարզեցին կազմալուծել է նաև Հիսուսի յոթանասուներկու աշակերտների կանոնը (հեղինակ՝ Ներսես Ընորհալի) և այն փոխարինել իր ստեղծած կանոնով: Նա հարկ է համարել ստեղծել նաև Թեոդորոս Չորավարի նոր կանոն...

Բացի այս, Անավարզեցին առանձին կանոններ է ստեղծել՝ նվիրված այնպիսի տոների, որոնք չկան մեր Տոնացույցում և առկա են կաթոլիկ Եկեղեցու տոնակարգում, ինչպես. «Թվիատութեան Յիսուսի», «Հոգեգալստեան ութերորդ օրուայ», «Է Ժողովոց», «Ամենայն Սրբոց»: Վերջինիս կապակցությամբ Ղ. Ալիշանը տեղեկացրել է, որ կանոնի վերջին երեք տները (իմա՝ Մանկունքը) «նուիրեալ են Ս. Անարծաթիցն, քանզի առ Լատինս ի մին աուր (1 Նոյեմբ.) կատարի սօն Ամենայն Սրբոց եւ սոցա առանձին»¹²⁸:

Անավարզեցին առանձին կանոններ է նվիրել նաև Հոռմի

¹²⁷ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ, 242:

¹²⁸ Նույն տեղում:

պապ Լևոն Մեծին և Սուրբ Բենեդիկտոսին, որոնք դասված չեն հայ Եկեղեցու սրբերի կարգում: Ավելին, Լևոն Մեծը, ինչպես գրում է Գ. Մաղոյանը, «հայ մատենագրության մէջ յիշուել է մերթ որպէս «մարդադաւան տօմարի» հեղինակ, մերթ՝ «ամբարիշտ», իսկ աւելի յաճախ՝ «նզովուած» ու «պիղծ» մակդիրներով: Նրա անունը կարելի է գտնել, իհարկէ նզովքների ուղեկցութեամբ, մինչեւ անգամ շարականներում»¹²⁹: Մինչդեռ Անավարզեցին պանծացրել է նրան և անգամ հայ Եկեղեցու դավանանքը աղանդ համարել («Սուրբն Լէօն դատապարտեաց զաղանդն զայն միաբնակաց»):

Անավարզեցին առանձին կանոններ է նվիրել նաև Մատթեոս, Մարկոս և Ղուկաս ավետարանիչներին, մինչդեռ մեր Եկեղեցին չորս ավետարանիչների տոնը նշում է համատեղ: Լատինամետ կաթողիկոս-շարականագիրը առանձին կանոններ է ձոնել նաև Անդրեաս և Թովմաս առաքյալներին, մինչդեռ մեր Եկեղեցին նրանց հիշատակի օրը նշում է այլ առաքյալների հետ:

Վերը շարադրվածից հետո առնվազն տարօրինակ է հնչում այն պնդումը, թե Անավարզեցին «Շնորհալու արժանի հետետորդն է»¹³⁰:

Դարերի ընթացքում հարստացած ու սրբագործված ազգային Շարակնոցը լատինացնելու նպատակով Անավարզեցին, ինչպես տեսանք, կատարել է ավերիչ փոփոխություններ ու նորամտծություններ: Այդ է պատճառը, որ նրա հեղինակած բոլոր շարականներն անխտիր պարականոն են դարձել: Դա կատարվել է 14-րդ դարի վերջերին, երբ ժամանակի խոշորագույն հոգևոր առաջնորդը՝ Գրիգոր Տաթևացին, ազգային Եկեղեցու դավանաբանության հիման վրա վերջնական խմբագրման է ենթարկել Շարակնոցը:

Քանի որ Անավարզեցու հեղինակած կանոնները հարիր չեն հայ հոգևոր երգի դարավոր ավանդույթներին և ազգային կերպին, ուստիև դրանք, ըստ էության, դուրս են հայ շարակնագրության մայրուղուց: Պաշտոնապես գոյատևելով շուրջ մեկ

¹²⁹ Տե՛ս Գ. Մաղոյան, Նշվ. աշխ., էջ 69:

¹³⁰ Նույն տեղում, էջ 75:

դար և վտարվելով Ծարակնոցից ու եկեղեցական արարողակարգից, դրանք էական ազդեցություն չեն ունեցել հայ հոգևոր երգի հետագա զարգացման վրա: Մի՛նչև օրս պահպանվում է Անավարզեցու միայն մեկ ներդրումը հոգևոր երաժշտության մեջ, որը վերաբերում է Առավոտյան ժամերգության «Մեծացուցէ» կարգին:

Ի տարբերություն Անավարզեցու շարականների երաժշտական բաղադրիչի, որ չի պահպանվել, մեզ հասու են դրանց գրական բաղադրիչի բազմաթիվ ամուշներ: Այսինքն՝ հնարավոր է որոշարկել դրանց գրական-գեղարվեստական արժեքը: Ղ. Ալիշանը, որ նաև շնորհալի բանաստեղծ էր և գրականության գիտակ, այդ շարականներում գեղեցիկ, պարզագույն և հոգիախոս իմաստներ տեսնելով հանդերձ, նշել է, որ դրանց մեջ «չիք վեմական ոճ մախնի շարականաց»¹³¹: Ալիշանին համակարծիք է Մ. Օրմանյանը, որի գնահատմամբ, «Անավարզեցիին գրական արժեքը շատ չբարձրանար այս շարականներով»¹³²: Իսկ Ս. Ամատունին ավելի խիստ գնահատելով՝ Անավարզեցու շարականների լեզուն «կոշտ ու պլոշտ» է համարել¹³³: Հակադրվելով այս կարծիքներին, Գ. Մադոյանը գտել է, թե, օրինակ, «Ամենայն Սրբոց» կանոնի «Երգերի շարադրանքը կոտ է, սահուն եւ գեղեցիկ, լանգաւորումն ու չափը գրեթէ կատարելութեան են հասցւած»¹³⁴: Իսկ Լևոն Մեծ պապի կանոնի քննությունից եզրահանգել է, թե «Սա շարականագրութեան մէջ թերևս ամենակատարեալ կանոններից է. առնուազն լանգի եւ տաղաչափութեան առումով»: Եվ որպէս ապացույց, բերել է հետևյալ տողերը, որոնք նման եզրահանգման տեղիք չեն տալիս.

*Մեղրածորան լեզու սրբոյն
Միտն ուշիմ, սիրտն արիագոյն,
Հոգին բընակ սրբոյ Ոգոյն:*

Եվ ապա. «Դժուար կլինի այս շարականին որեւէ այլ երգ

¹³¹ Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 242:

¹³² Մ. Օրմանեան, Ազգապատում, Բ, Կ.Պոլիս, 1914, էջ 1751:

¹³³ Տե՛ս Ս. Ամատունի, Նշվ. աշխ., էջ 46:

¹³⁴ Գ. Մադոյեան, Նշվ. աշխ., էջ 52:

հակադրելը: Հեղինակի ստեղծած պատկերները խօսում են եւ հմայիչ, շարադրանքը ինքնին կարծես մի մեղեդի լինի, եւ ամբողջությամբ զգալի է մեծ շարականագրի տաղանդը»¹³⁵: Ակներն է գրականագետի ավելի քան չափազանցված գնահատանքը: Իրականությունն այն է, որ Անավարզեցու շարականներում բացակայում են նրա մեծ նախորդների՝ Մաշտոցի, Խորենացու, Ծնորհալու և մյուսների «վսեմական ոճը» և գեղարվեստական բարձր արժանիքները: Հետևաբար, եթե այդ շարականներն անգամ պարականոն չլինեին իրենց բովանդակության պատճառով, ապա դարձյալ իրենց գրական-գեղարվեստական չափազանց թույլ լիցքով անկարող կլինեին քիչ թե շատ ազդեցություն ունենալ հետագա հայ բանաստեղծության վրա:

Գրիգոր Անավարզեցու հեղինակած կանոնները թե՛ իրենց ապագային բովանդակությամբ և թե՛ լեզվով ու ոճով նշանավորում են իր մայրամուտին մոտեցող շարականագրության կտրուկ վայրէջքը...

Ծարականագրության վերջին ներկայացուցիչը Կիրակոս Երզնկացին է (1270-ական թթ.–1356): Եղել է բազմարդյուն մանկավարժ և մատենագիր: Մեծարվել է իբրև «Մեծ եւ հռչակաւոր վարդապետ», «Գերաշնորհ եւ եռամեծ ըաբունապետ»: Հիմնականում գործել է Երզնկայում¹³⁶: Համառ պայքար է մղել այլադավան քարոզիչների դեմ՝ ցույց տալով հայոց միասնությունը քայքայող դավանափոխության կործանարար հետևանքները:

Աստվածաբանական, իմաստասիրական, մեկնողական և այլ կարգի երկերից գատ թողել է նաև չափածո գործեր: Նրան է վերագրվում Ծարակնոցը եզրափակող «Արեւելք Գերարփին» շարականը՝ նվիրված Աստվածածնի վերափոխմանը. «Կիրակոս վարդապետն Երզնկացի՝ զԱրեւելք Գերարփին, զոր ոմանք Կիրակոսի Թարգմանչի տան, որ էր աշակերտ Գրիգորի

¹³⁵ Նույն տեղում, էջ 70–71:

¹³⁶ Տե՛ս Ա. Գանիելեան, Կիրակոս Երզնկացի, «Գանձասար», 6, 1996:

Վկայասիրին Մեծի»¹³⁷: Անհավանական է, որ այդ արտականոն շարականը գրած լինի Կիրակոս Թարգմանիչը, որն ապրել է Շնորհալույց առաջ, երբ Վերափոխման տոնի բոլոր կանոնները դեռևս ստեղծված չէին: Մատենագիտական վկայություններն էլ առավել հաստատուն հիմք են տալիս «Արեւելք Գերարփին» շարականի հեղինակ համարել Կիրակոս Երզնկացուն¹³⁸:

Վերափոխման տոնի առաջին օրվա կանոնը հեղինակել է Խորենացին, իսկ երկրորդ-երրորդ օրերի կանոնները՝ Շնորհալին: Այսուհանդերձ Կիրակոս Երզնկացին հարկ է համարել այդ թեմայով ստեղծել մի երգ, որն, իբրև առանձին շարական, ընդգրկվել է Ծարակնոցում: Դա, ըստ երևույթին, կատարվել է Ծարակնոցի՝ Գրիգոր Տաթևացու խմբագրելուց հետո¹³⁹:

Կիրակոս Երզնկացու շարականը այբբենաշար է, այսինքն՝ բաղկացած է 36 տներից, որոնք վեցատող են և հանգավորված: Ունի նաև մի վերջընթեր հատված՝ **Կիրակոս Վարդապետ** բանակապով:

Բանաստեղծորեն մշակելով Աստվածածնի՝ հոգով և մարմնով երկինք համբարձվելու թեման, Կիրակոս Երզնկացին, անշուշտ, ազդվել է Քերթողահոր և Շնորհալու համապատասխան երգերից և իր շարականը ողողել հոգևոր լույսով ու ցնծագին տրամադրությամբ: Նա, հիմնականում ավանդական պատկերներով, գովերգում է Արեգակ-Քրիստոսի Արևելք և Լուսածին Օթևան, անմեկնելի Մատյան Տիրամորը.

*Ընտրեա՛լ յառաջ քան զհիմունս
ի սկըզբանէ՛ աշխարհի,
Տումա՛ր անճառ, անքընին
ես Ա՛մպ թեթեւ, լուսածին.
բարեխօսեա՛ Միածնին,
Աստուածածի՛ն, Մա՛յր Բանին:*

¹³⁷ Հ. Անասյան, Նշվ. աշխ., էջ LXIX: Կիրակոս Երզնկացու անունը, իբրև շարականագիր, հիշատակել է նաև Առաքել Սյունեցին:

¹³⁸ Այսուհանդերձ, Ն. Ակիմյանը և նրա հետևորդներն Պ. Խաչատրյանը շարականը վերագրել են Կիրակոս Թարգմանիչին (տես «Գանձարան հայ հին բանաստեղծության», էջ 899):

¹³⁹ Այս կապակցությամբ տե՛ս Գ.Աւետիքեան, Նշվ. աշխ., էջ 702–703:

Վերջին երկտողը շարականի առաջին դրվագը կազմող տասնմեկ տողերի կրկնակն է: Երկրորդ դրվագում շարականագիրն անցնում է Վերափոխման բուն պատմությանը: Այստեղ է, որ նրա խոսքը հնչում է նորովի: Աշխույժ պատումով նա կարողանում է ներկայացնել Վերափոխման տեսարանը, որի գործող անձինք թե՛ երկրայիններն են և թե՛ երկնայինները: Ահա, «վազեալք որպէս զարծուին»՝ Երուսաղէմ են գալիս Քրիստոսի տասներկու առաքյալները, որոնց միանում է աշակերտների բազմությունը: Ապա երկնքից իջնում է Լույս-Աստվածորդին երկնային զորքերի հետ, որոնք շրջապատում են մեռնող Աստվածածինն և օրհներգում նրան.

*Հոյլք վերին զօրացն իջեալ՝
շուրջ ըզԿուսինըն պար առեալ,
զերգս օրհնութեան եղանակեալ,
քաղցրր ձայնի ակումբ առեալ,
զեռահիսեակըն նուագեալ,
զմի Տէրութիւնն երգարանեալ:*

Հրեշտակներին ձայնակցում են առաքյալներն ու սուրբ կույսերը՝ վառվող ջահերով: Սուրբ արարողությանը մասնակցելու համար այնտեղ է պանում նաև մեծն Մովսեսն իր բոլոր խմբերով: Եվ Տիրամայրն իր Միածին Որդու ձեռքերին ավանդում է հոգին, որը փայլում է «պայծառ քան զարփի»: Այս տեսնելով՝ Պետրոս առաքյալը զարհուրում է և հարցնում Քրիստոսին, թե ինչպես է Մարիամը «հոգով պայծառ արփույ նմանեալ»: Քրիստոսը պատասխանում է՝ բացատրելով, թե ինչպես է ստեղծել մարդկանց պայծառ հոգիները: Պետրոսի և Քրիստոսի այս երկխոսությունը առավել կենդանություն է հաղորդում շարականի պատումին:

Այնուհետև նկարագրվում է, թե ինչպես շնորհագարդ հրեշտակները սլանալով՝ Տիրամոր հոգին բարձրացնում են վեր՝ սուրբ լույսի ճանապարհով: Իսկ առաքյալները «աստուածարեալ սուրբ բազկօք» և քաղցրաձայն սաղմոսերգերով Մարիամի դին գերեզման են դնում: Նրանք մի կողմից «ցնծալից բերկրանօք», մյուս կողմից՝ «յորդաֆոս արտասուօք» երեք օր համախմբված քաղցր երգեր են երգում Տիրուհու շիրմի

մոտ: Այս արարողություններին ուշացումով է ներկայանում Բարդուղիմեոս առաքյալը, որը ցանկանում է տեսնել իր «Տեն-չալիի» դին: Կատարելով իրենց եղբոր բաղձանքը՝ առաքյալները բացում են տապանը, սակայն

*եւ զԲաղձալին իւր ոչ գրտեալ,
քանզի եղև վերափոխեալ
ի փառս անճատ նախ պատրաստեալ:*

Ինչպես Աստվածորդին, Աստվածամայրը ևս երեքօրյա թաղումից հետո հոգով և մարմնով հարություն էր առել և համբարձվել, «քանզի անճատ է խորհուրդ փառաց Կուսին լանմարմնոց»: Այս է ամբողջ պատմությունը, որ բավական արտահայտչորեն պատկերել է Կիրակոս Երզնկացին: Գ. Հակոբյանի գնահատմամբ, «Այս գեղեցիկ շարականը մեր բազմաթիվ Մեծացուցեցների ամփոփումն ու պսակն է»¹⁴⁰: Այն ամփոփում է նաև ողջ կանոնական շարակնոցը:

Ստորև բերում ենք 12-14-րդ դարերում ստեղծված (կամ վերակազմված) կանոնների և արտականոնային շարականների ցանկը՝ արդի կանոնական Ծարակնոցի հերթականությամբ և հեղինակների անուններով: Փակագծերում նշված են այն հեղինակները, որոնք մեկ կամ ավելի շարական ունեն տվյալ կանոնում:

Վերջում նշված են այն կանոններն ու շարականները, որոնց հեղինակները (կամ ստեղծման ժամանակը) հայտնի են, սակայն այդ գործերը դուրս են արդի կանոնական Ծարակնոցի կառուցվածքից:

Ցանկում չենք ընդգրկել Ներսես Ծնորհալու այն երգերը, որոնք Ծարակնոց են մտել ժամագրքից:

Ցանկում ընդգրկված չեն նաև Գրիգոր Անավարզեցու կանոնները, որոնք դուրս են հայ Եկեղեցու տոնակարգից և համատեղելի չեն ազգային Ծարակնոցին:

¹⁴⁰ Գ. Հակոբյան, Ծարականների ժանրը, էջ 285:

- Կանոն Ծննդեան սրբոյ Աստուածածնին
ի ճնողաց իւրոյ ի Յովակիմայ եւ Աննայէ – ՅԱԿՈՒ ԿԼԱՅԵՏԻ
Կանոն Յովակիմայ եւ Աննայի՝
Ծնողաց սրբուհոյ Աստուածածնին – ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Կանոն Աւետեաց սուրբ Աստուածածնին – ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱԽՈՒՆԻ
Կանոն Տրդատայ սուրբ Թագաւորին – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն գլխաւոր առաքելոցն
Պետրոսի եւ Պօղոսի – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն Որդոցն Որոտման – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն Երկոտասան առաքելոցն – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Կանոն Եօթանասուն եւ երկու աշակերտացն – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն Յովնանու մարգարէին – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոյն Սարգսի Զօրավարին – ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ
Կանոն Բուն Բարեկենդանին – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոյն Թէոդորոսի Զօրավարին – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոնք Կիրակէիցն Աղոյճացից
(Երկրորդ-վեցերորդ Կիրակիների) – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Շարական սրբոյն Կիրոյի Երուսաղիմայ Հայրապետին – ՆԵՐՍԷՍ
ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
մտանելոյն ի Վիրապն – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
(Յովհաննէս Երզնկացի)
Կանոն Սրբոյ Զատկին – ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ
Կանոն Նոր Կիրակէին՝
Կրկին Զատկին – ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ
Կանոն Համբարձման Քրիստոսի – ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ
Կանոն Երկրորդ Ծաղկազարդին – ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱԽՈՒՆԻ
Կանոնք Հոգեգալստեան
(Երկրորդ-հինգերորդ օրերի) – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
Կանոնք Հոգեգալստեան
(Վեցերորդ-յոթերորդ օրերի) – ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ
Կանոն ծննդեան Յովհաննու Մկրտչին – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ
(Գրիգոր Սկեւացի)
Կանոն որդոց եւ թոռանց սրբոյն
Գրիգոր Լուսաւորչին – ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

Կանոն սրբոյն Մեծի Ներսէսի
Հայրապետին – ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ
Շարական սրբոյն Իսահակայ
Պարթեւ Հայրապետին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբուհոյ Սանդիստոյ – ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Կանոնք Վարդավառի
(Երկրորդ և երրորդ օրերի) – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Կանոնք Վերափոխման սուրբ Աստուածածնին
(Երկրորդ և երրորդ օրերի) – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոց մարգարէից – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոց թարգմանչաց – ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Կանոն սրբոյ Յակոբայ
Մծբնայ Հայրապետին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
(Յովհաննէս Երզնկացի)
Կանոն Մանկանցն Բեթղեմի – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոց Հրեշտակապետացն Միքայէլի
եւ Գաբրիէլի եւ ամենայն երկնային զօրացն – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Կանոն սրբոց Հայրապետացն – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական Իգնատիոսի Հայրապետին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական սրբոյն
Յովհաննու Ոսկեբերանին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական սրբոյն Բարսղի Հայրապետին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական սրբոյն Գրիգորի
Աստուածաբանին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական Նիկողայոսի
Հայրապետին – ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ
Շարական սրբոյն Եփրեմին – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական սրբոցն
Եւստրատիոսեանց – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական Երկուց Բիւրուցն – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական սրբոյն Ստեփանոսի
Ուլնցւոյն – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական միտոնի օրհնելոյ – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Մեղեղի միտոնի ի վերայ նորածնելոցն – ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
Շարական զգեստու պատարագին – ԽԱԶԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԵՑԻ

Շարական խնկարկութեան

սրբոյ պատարագին – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ

Շարական եօթն

խոտաճարակացն – ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

**Կանոն սրբոցն Վարդանանց – ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱԽԱԳ
(Ներսէս Ծնորհալի)**

**Կանոն սրբոցն Ղեռնդեանց – ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱԽԱԳ
(Ներսէս Ծնորհալի)**

Շարական Վերափոխման

սուրբ Աստուածածնի – ԿԻՐԱԿՈՍ ԵՐԶՆԿԱՑԻ

Կանոն գիտից նշխարաց

սրբոյն Գրիգոր Լուսաւորչին – ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ

**Կանոն սրբոյն Գէորգեայ Զօրավարին – ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱԽՈՒՆԻ
(Ներսէս Ծնորհալի)**

Կանոն Գէորգեայ եւ այլոց վկայիցն – ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ

Կանոն Թաղէոսի առաքելոյն – ԱՆԱՆՈՒՆ (12-րդ դ.)

Կանոն սրբոցն Թաղէոսի եւ

Բարդուղիմէոսի առաքելոցն – ԱՆԱՆՈՒՆ (12-րդ դ.)

Կանոն սրբոյն Թովմայի առաքելոյն – ԱՆԱՆՈՒՆ (12-13-րդ դդ.)

Շարական հանդերձ օրհնելոց

հարսանեաց – ԽԱԶԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԵՑԻ

Շարական սրբոցն Տարագոսի,

Պրորոսի եւ Անդրոնիկոսի – ՅԱԿՈՒ ԿԼԱՅԵՑԻ